



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4.ԱՏՐՅԱՆ

2. ԴԿԶԿ

27.



Հ.Ս.Խ.Հ. ՊԵՏԶՐԱՏ

— 19 ՅԵՐԵՎԱՆ 30 —

1171104530

891.99

4213

4-21

4-81 The price of
Borax increased.

[illegible]

39199
Ա. 81

Կ. ԱՅՐԵԱՆ

1930-1931 և 1931 և

ԶՐԱՀԱԳՆԱՑԻԸ



ԿԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ. ՅԵՐԵՎԱՆ—1930

Հրատ. № 1241

Գրառ. № 4058 (բ.) Պատ. № 270. Տիրաժ 3000

Պետհրատի 2-րդ տպարան Յերևանում

ՁՐԱՀԱԳՆԱՑՔԸ

Ձմռան գիշերվա տաժանակիր ճամբորդութունից հետո՝ չերեք ուղևորները հասան Թ. գյուղը և քայլերն ուղղեցին դեպի բաւրակ Գեոլի խրճիթը:

Գեոն միջահասակ՝ արեւո ղեմքով, կրակոտ աչքերով յերիտասարդ էր: Մանուկ հասակից բաւրակություն էր արել Շիրակի գյուղերում՝ ռեսների, քյոթվաների և կուլակների մոտ, բոլորին էլ իր հինգ մատի պէս էր ճանաչում, բոլորն էլ նրա կաշին դադիւ կէին:

Գեոն յոթ տարի ծառայել էր ռուսական բանակում, մասնակցել իմպերիալիստական մեծ պատերազմին՝ զերմանական ճակատում: Փեարվարյան հեղափոխութունից հետո, նա մի քանի ամիս աշխատում էր բանակում քայլերիկ ընկերների հետ. ապա հուսով, վոր իր հայրենիքումն էլ շուտով կարգերը կփոխվեն, և մի կտոր հող կստանա գյուղում ու հանդիսա կաշխատի, վերադարձաւ գյուղ:

Նրա հույսերն ի դերե յեւան. գյուղն առաջվա գրության մեջ էր. իրավունքը, իշխանութունը, հողը ցիցերի, կուլակների ձեռքին էր, գյուղացիությունը հեծում էր կաշառակերների ու վաշխառուների բռնունցքի տակ: Գեոյի համար անտանելի էլին տիւրող կարգերը, սակայն նա սիրտը չկոտրեց, զնաց քա-

դաք, կապվեց տեղի բալլէիկ կազմակերպության հետ
և գործի անցավ:

Նա անդուլ աշխատում եր տիրող կարգերի դեմ,
պրոպագանդ եր մղում գլուղացիութեան մեջ խրճիթ-
ներում, դաշտերում և աշխատանքի, հանգստի ժամա-
նակ կազմակերպում նրանց: Շատ ժամանակ չանցավ,
և Գևոն իրենց ու շրջակա գյուղերում բազմաթիւ
կազմակերպված ընկերներ ուներ արդեն:

Հենց ալդ գիշերն ել Գևոն իր խրճիթի կողքի
մարագում իր ընկերներին կարեւոր խորհրդակցութեան
եր հավաքել: Բաղադրեց մարդիկ պիտի գային, իսկ
մինչև նրանց գալը Գևոն զրոյցում եր ընկերներ
հետ, համոզում, պատասխանում նրանց հարցերին:

— Լավ իմացեք, ասել եմ, ելի ասում եմ՝ քանի
դեկը դաշնակի ձեռքին ե, ազգային կռիւները, կո-
տորածը, քաղցը, զաղթը, թշվառութեանը, հիվան-
դութեանը մեզինից անբաժան կլինեն,—ասում եր
Գևոն:

— Մենք խաղաղութուն ենք ուզում, խաղա-
ղութեան:

— Բավական ե, արդեն դանակը վոսկոբին ե
հասել...

— Վոչ դրանց կռիւն ենք ուզում, վոչ ել դրանց
կռով խլած յերկիրը:

— Կռիւ, ի՞նչ կռիւ,—հեգնորեն վրա բերեց Գե-
վոն,—դաշնակը կռիւ, չհավատած. դաշնակը մի բա-
ժակ բախի խմելիս պատրաստ ե մինչև Կիլիկիա ար-
շավելու, սակայն յերբ տրաքի թշնամու առաջին թըն-
դանոթը, մինչև Յերևան մեկ կփախչի: Բավական ե,
վորքան կռիւ արին, բավական ե, վորքան ծծեցին

մեր արյունը, դիակ դարձրին մեր ժողովրդին. բավական եւ Մենք ալժամ հող և հաց ենք ուղղում:

— Հաց, հաց:

— Յեւ խաղաղութիւն, խաղաղութիւն ենք ուղղում...

Հանկարծ լսվեց շների հաջոցը:

— Յերևի գալիս են, —ասաց Գեոն, վերցրեց ճրագն ու փախը և դուրս գնաց մարազից: Յերեք ճամբորդները մոտեցան նրան:

Գեոն ձեռքի ճրագով լուսավորեց Սերգեյի դեմքը, ապա ուրախութեան աշնակիսի բուռն թափով փաթաթվեց Սերգեյին, վեր ճրագը վալը ընկավ ձեռքից:

— Բարե, հաղար բարի, վորտեղ ես, այ մարդ, եսքան ժամանակ սպասելուց աչքներս ջուր կտրեց: Գեոն ճրագը վերցնելով՝ ճամբորդներին առաջնորդեց մարազը:

Յերբ Սերգեյն իր լերկու ընկերներին հետ Գեոյի առաջնորդութեամբ ներս մտավ մարազը, պատի տակ նստած բոլոր գլուղացիները վտարի կանգնեցին և մեկիկ-մեկիկ սեղմեցին լեկողներին ձեռքը:

— Նստեցեք, դուրբան, նստեցեք, հողնած կլինեք, — խոսեցին գլուղացիները:

Ճամբորդները նստեցին փոքրիկ սեղանի մոտ դրված նստարանի վրա:

— Մենք բավականին հոգնել ենք, — խոսեց Մամիկոնը, — դուք են ասեք, վաղմուց ե, ինչ սպասուած եք մեզ:

— Հա, մթնելուն պէս հավաքվեցինք, բան չունենք, գործ չունենք, ուտել չկա, խմել չկա, հավաքվեցինք իրար մոտ դրուցում եյինք:

— Ելի նոր ընկերներ կան,—հարցրեց Սերգեյը:

— Քո վերջին այցից հետո, մի ամիս կըլի, չէ՞, յերկուսն էլ ավելացան:

— Հնգերներ,—խոսեց բատրակ Գևորգ,— այստեղ վտանգավոր է յերկար մնալը, ընկերներն էլ շտապում են, բաց անենք մեր խորհրդակցությունն ու տեսնենք՝ ինչ լուր է բերել մեր ընկեր Սերգեյը:

— Այսոր յերկար խոսելու կարիք չկա. ինչ վոր ասելու էինք, վաղուց ասել ենք: Մեր առաջ դրված է մի մեծ հարց, վոր մեզնից լուծումն է պահանջում. դա մեր ապստամբության կազմակերպության հարցն է. յոսեսունի չափ գյուղ էլինենք շրջած վերջին ժամանակներս և չեն հիշում մի գյուղ, ուր չքավոր գյուղացիութունն ապստամբության հարց չլինի առաջադրած. դա նշանակում է, վոր ապստամբության հարցը հասունացել է. նշանակում է, վոր թշվառության և համբերության բաժակն արդեն լցվել է:

— Լցվել է, բա՛:

— Լցված բաժակը պետք է թափվի,—շարունակեց Սերգեյը:—Ապստամբության համար բոլոր գյուղերի ընկերները հայտնում են իրենց պատրաստակամութունը, անձնագոհութունը: Ստեփան դա բավական չէ: Վորպեսզի ապստամբությունը հաղթանակի, նա պետք է լինի մասսայական, նա պետք է լինի կազմակերպված, նրա անելիքները պետք է լինեն պարզորոշ: Վաղվա ապստամբության համար մենք տխուրք է կազմակերպվենք, պատրաստ լինենք, հս մահակներով չենք դուրս գալու թշնամու դեմ: Ապստամբութունը թեթև գործ չէ, շատ դոհեր է պահանջում, իսկ մենք անփորձ ենք: Դրա համար՝ վորքան

կաղմակերպված լինենք, ախճան քիչ զոհեր կտանք, ախճան ալիլի հեշտ կտիրանանք իշխանութիւնը:

Սերդեկը լռեց պահ մի, դիտեց ռանկնդիրներին զեմքերը և ապա շարունակեց նույն համոզիչ շեշտով:

— Դիտեմ, դուք ևս պատրաստ եք ապստամբութեան համար, սակայն պատրաստ և ձեր դյուղի ամբողջ չքավորութիւնը, դուք հարկավոր աշխատանքը կատարել եք նրանց մեջ...

Յերկար-յերկար խոսում եր Սերդեկը իր հանդարտ, մեղմ ձայնով, մի ատմի բացատրելով աղքատամբութեան բոլոր դժվարութիւնները, ուժեղ մասսայական կաղմակերպութեան անհրաժեշտութիւնը, դյուղացիութեան անկիւնները:

— Այստեղ մեր խորհրդակցութեան նպատակն է, — վերջացրեց Սերդեկը, — իմանալ ձեր կարծիքը, ձեր տրամադրութիւնը, լսել ձեր ձայնը:

— Մեր կարծիքը, ի՞նչ պիտի լինի մեր կարծիքը, լերք քաղցից լերեխաներս խամրել, ճրագի նման հանդիւմ են, լերը ամեն դյուղից որական տաս-քսան մարդ են թաղում:

— Ի՞նչ պիտի լինի իմ կարծիքը, յերբ յերկու աշխատող ունեւի, յերկու գեղեցիկ տղա, լերկուսին ել տարան բորենիներին կերակուր դարձրին:

— Հիվանդութիւնը, տիֆը ել մարդ չթողեց, յերիտասարդ չթողեց, ել յերեխա չմնաց որորոցում...

— Ել խոտի թիքա չթողին, չորքստանի չթողին մեր տներում, համիւ ի՞նչ է, համիւ ել են տանում լափում:

— Վար չունենք, ցան չունենք, սերմացու չունենք, ել ի՞նչի յենք սպասում, ել վիճից չի ժամանակը, ել սրանից լավ կաղմակերպվածութիւն...

— Շաբաթը մեկ անգամ սալդաթ են հավաքում, տանում. գնացողին ել վերադարձ չկա, բողոքողին դամշու տակ են առնում, ջանք քրքրում, կապուտ լեղակ շինում, հաբա ժամանակը չի:

— Բոլորի ցավը մեկ է, բոլորի հույսը մեկ, սրանից ել լավ կազմակերպվածություն. յերկիրն ավերվել է, գյուղերում մարդ չկա, անասուն չկա, նավթ չկա, ճրագ չկա, լույս չկա...

Գյուղացիները դեռ յերկար կշարունակեյին իրենց բողոքը, բայց Սերգեյը ձեռքով նշան արեց, վոր ընկերները լռեն:

— Ձեր այդ բոլոր ասածները, — բացականչեց Սերգեյը, — մենք լսել ենք բոլոր գյուղերում. ամենուրեք մեզնից պահանջում են վաղն և եթ բարձրացնել ապստամբության դրոշմ:

— Հա... հենց դրանից խոսի, մենակ ապստամբություն, ուրիշ վոչինչ:

— Ապստամբությունից հետո ինչ ուզում ե թող լինի:

— Ինչ վոր յեղել է, յեղել է, ել սրանից ավել ի՞նչ պիտի լինի:

— Մեր ապստամբությունն անհետևանք չի մնա, մեզ հետ է ամբողջ գյուղացիությունը, մի որում դուրս կջննք բոլոր քյովականերին, իշխանավորներին ու մառդերիսաներին, — վրա բերեց Գևորգ. — մեզ ոգնության կգան կարմիրները:

— Մեր թիկունքը կաշառպանի գրահալնացքը: Սերգեյը կրկին նշան արավ լռելու:

— Ծանր է ձեր վիճակը, անտանելի, սակայն մենք վաղը, մյուս որը չենք կարող ապստամբվել. դրա

համար վոչ մենք ենք պատրաստ և վոչ դուք: Մենք պատրաստում ենք լերկրորդ զրահազնացքը. նա պատրաստ էլլինի լերկու ամսից հետո, և մայիսի սկզբին մենք կրարձրացնենք աղստամբության դրոշը: Մինչև այդ ժամանակ դուք տենդային թափով աշխատանք պիտի տանեք գյուղացիության մեջ. վճյ մեզ, յեթե չկարողացանք ոգտագործել այդ ժամանակամիջոցը: Աղստամբության որվա և այլ կազմակերպչական հարցերի մասին կհայտնենք ձեզ բատրակ Գևույի միջոցով...

Յերկար ու մանրամասն Մերգեյը խոսում եր հարևան գյուղերի հետ ունենալիք կապի, աղստամբության աաքաիկայի, գիտցիպլինալի մասին, հորդորում եր ընկերներին համբերությամբ սպասել մինչև նշանակված ժամը, վողկորում եր անդու աշխատել և կազմակերպված դուրս գալ դասակարգային թշնամու դեմ:

Կես գիշերին արդեն մոտ եր, լերը գյուղացիները ցրվեցին իրենց տները: Շամբորդները մտան Գևույի խրճիթը հանգստանալու:



Խրճիթում նրանց աչքի առաջ ապշեցուցիչ տեսարան բացվեց: Թոնրի աջ կողմը խսիրի վրա նստած եր բոտրակ Գևույի կինը, նրա կողքին կեդտոտ, պատառոտված գորգերի վրա պտուկած ելին նրա յերկու չերեխաները, վորոնց վոսկոբները բարակ եյին մոմի նման: Թոնրի մեջ կախ եր տված գինվորական փոքրիկ կաթսան՝ վորի մեջ յեփվում եր կերակուրը:

Կինը հլուրերին տեսնելով՝ վեր ցատկեց և մի ուրիշ խսիր փոսեց Թոնրի մյուս կողմը նրանց համար:

— Նստեցե՛ք, նստեցե՛ք,— առաջարկեց Գևորգը հոգնած հյուրերին. յերանի մի քիչ շաքար լինեք, թեյով հյուրասիրեցի՛ ձեզ: Ա՛խ, շաքար, շաքար, համն անգամ մոռացել ենք:

— Մեզ վոչինչ հարկավոր չե, Գևորգ, մի քանի ժամ հանգիստ, ուրիշ վոչինչ,— պատասխանեց Սերգեյը:

— Վա՛յ, սիրտս կվառի, շո՛ւտ,— գոչեց նվազ ձայնով յերեխաներից մեկը:

— Ո՛ւՖ, դեռ չեմի՞ց կերակուրը,— բացականչեց մյուսը:

Գևորգի յերեխաները հիվանդ ելին, յերկուսն ել արվում ելին տաքության մեջ. ճրագի լույսի տակ յերևում ելին նրանց վոսկրացած մարմինները:

Մայրը սրբեց փոքրի ճակատի քրտինքը, յերկաթե կեռով հանեց թոնրից կաթսան և դրեց թոնրի կողքին:

— Ի՞նչ ե, հիվանդ են յերեխաները,— հարցրեց Սերգոն Գևորգին:

— Իսկի առողջ յերեխա կմ գեղը.— նա վերցրեց թոնրի կողքին դրած կաթսան և, գդալով հանելով նրա միջի մոխրագույն հեղուկը, բացականչեց.

— Ահա, նայեցե՛ք, տեսե՛ք, թե ինչով ենք կերակրում մենք նրանց, գարու ալյուրից շաղախած լափ, վորով առաջ շներին ելինք կերակրում: Այս լափից ել այժմ աֆրան չկա, վոր մենք ել ուտենք կերակրում ենք միմիայն յերեխաներին: Այս կերակուրն եր, սիրելիներս, վոր գերեղման դրեց ավադ վորդուս, յերեք ուր առաջ եմ թաղել: Միայն յես չեմ այս դժբախտ վիճակում, գյուղում ալլևս յերեխա չը

մնաց, յերիտասարդ չմնաց, կոտորվեցին այս անիծյալ հիվանդութիւններից: Գեոլի խոսքերի վրա կինն սկսեց խռւլ ձայնով հեկեկալ:

— Այժմ ել սրանք են այրվում տաքութիւն մեջ. տմեն անդամ, յերբ նայում եմ սրանց վտակացած ձեռներին ու վոսներին, ուշքերս մթնում են և սիրտս մարում ևս Ալսպիսի չքավորութեան ու զրկանքների մեջ մինչև յերբ պիտի տառապենք...

Գեոլի ուշքերը վառվում էին մի անսովոր կրակով. կարծես նրա սիրտը կտոր-կտոր եր լինում. պատրաստ եր պատառոտելու այն մարդկանց, վորոնք պատճառ էլին դարձել իր անտանելի տառապանքներին:

Սերգեյը թիկն տված տեղից մոտեցավ հիվանդ լերեխաներից մեկին, շփեց նրա ճակատը և բռնեց դարկերակը:

— Յերիտան կրակի պես այրվում ե, իսկ սիրտն անկանոն դարկեր և տալիս. ցավալին այն և, վոր վոչ մի բանով չի կարելի ողնել. այս քարուքանդ տեղը նույնիսկ կանոնավոր ուտելիք չկա, ուր մնաց բժիշկ:

— Իսկ ինչ կարող ե անել բժիշկը, լերբ հասարակ դեղորայք անդամ չկա,—պատասխանեց Գեոն, վերցնելով կրկին թոնրի ափին դրած ղինվորակաւ կաթսան:

— Տեսնում եք այս կաթոսլի միջի լափը,—ասաց նա,—սրա մեջ կես ֆունտ դարի կա. այդ դարու համար այստեղից Ալեքսով եմ գնացել, կես որ հերթի կանգնել. Բերելու ժամանակ բուքը վրա տվով, պակասը լրացրեց. առանց այն ել քաղցածութունից զլուխս պտտվում եր, ուշքս կորցրի. հարեան գյուղի

անցորդներն են հազիվ-հազ ուշքի բերել ինձ: Այդ դեռ վոչինչ. չերբ հիշում եմ, վոր ամեն մի կես ֆունտ դարու համար վաղը, մյուս ուրը, յերրորդ ուրը, կըրկին պետք ե քաղաք գնամ և վերադառնամ, խելքս մաղում ե. սա հողագործի կյանք ե: Հապա չեկող տարի ինչ պետք ե անենք, վոչ ցանած ունենք, վոչ վարած, վոչ սերմացու:

— Ո՛ք, ճՖ... ծանր կերպով հառաչեց յերեսան ու սկսեց դողալ: Գևոն ու կինն իրենց հասցեքը սևռոնցին միմյանց ու գունատվեցին: Մայրը ճրագը մոտեցրեց յերեստիին ու գիրկն առավ նրան: Գևոն վեր թռավ տեղից ու մոտենալով յերեսային՝ սարսափելի տառնապի մեջ բացականչեց.

— Ո՛յ, ո՛յ, նա ել մահվանից առաջ այսպես դողում, այսպես թըպրտում եր, նա ել... Գևոն գլուխը կախ գցեց, սկսեց կուրծքը ջղաձգորեն տրորել և հայհոյել, «Անիրաջներ, անզգամներ, ավերեցին քար ու քանդ արին յերկիրը. սպանեցին, մեռցրին մեզ, ել մարդ չմնաց, զավակներս, զավակներս...»

Սերգեյն իր մոտ չեղած շշի արադով սկսեց մերսել յերեսալի մարմինը, վորը մահվան դողի մեջ կամաց-կամաց սառչում եր: Գաղցից վոսկրացած մարմնի մեջ բաբախող սիրտն սկսեց դանդաղ և անկանոն դարկեր տալ և իսպառ դադարեց բաբախելուց:

Մայրը կրծքից չպոկեց յերեսային և ամբողջ գիշեր զսպված ձայնով հեկեկում եր իր դառն վիճակը:

* * *

Աքաղաղներն արդեն կանչում ելին: Գիշերվա ժամը չորսն անց եր: Գևոն բարձրացրեց իր գլուխը.

արցունքից ալրված աչքերը տրորեց և վեր հացաժառնակից: Սերգեյն արթուն եր, իսկ նրա յերկու ընկերները քնած էին դեռ: Գեոն մտանցաժ Սերգեյին և նստեց նրա կողքին:

Սերգեյը ծոցից հանեց մի ծրար և Գեոյին տալով ասաց.

— Այս ծրարի մեջ են ալն անձանց և գլուղերի անունները, վորոնց հետ դու պիտք ե կապ հաստատես, մասնակցելով նրանց խորհրդակցութուններին. ձեր շրջանի ղեկավարն եք դու և Սիմոնը, բոլոր կազմակերպչական հարցերի մասին կդիմես ինձ: Ապրտատրութւան որվա մասին կհայտարարվի առանձին, անպայման շուտ-շուտ կգաս քաղաք, կհանդիպես ինձ դրահապանքում: Ամեն ինչ պետք ե անես չափազանց զգուշ և կշռադատելով: Այժմ մենք կհանապարհվենք, վորպեսզի լուրսը բացվելուն պես քաղաք հասնենք:

Սերգեյն արթնացրեց իր ընկերներին, վորոնք չնայած յերեխայի մահվան թողած ծանր տալաժորությանը, հոգնած ու ջարդված՝ քնել էլին: Միքանի բոպե չանցած, ճամբորդները կաղմ սւ պատրաստ դուրս լիկան բատրակ Գեոյի խրճիթից: Նրանց առաջնորդում եր Գեոն՝ ճրագը ձեռքին: Բաժանման բոպելին Սերգեյը հանեց գրպանից մի կույտ դրամանիշներ և տալով Գեոյին, խնդրեց, վոր դրանցով նա հողա իր կենդանի մնացած զավակի սնունդը, վորպեսզի գոնե նրան հնարավոր լինի ապատել մահվան ճիրաններից:

Գեոն ճանապարհ դրեց նրանց մինչև գլուղի ծայրը:

Յերեք ճամբորդները բաժանվելով Գևոյից բընեցին Ալեքսոյի ճամբան:

Վերադարձին Գևոն, մոռացած իր անձնական վիշտը, մտածում էր այն որվա մասին, չերբ դուրս կքշեն իրենց գյուղից կուլակներին ու ռեսներին, կազատվեն նրանց կեղեքումներից, ճանապարհները կըրացվեն, լերկիրը կվերակենդանանա, Գևոն դուրս կգա Շիրակի դաշտը՝ վարելու, հերկելու և ցանելու, հացը կլինի, շաքարը, չիթն ու բյաղը կգան, հիվանդությունները կվերանան...

Յեվ այդ ուրը հեռու չէր թվում Գևոյին, թեև նրա գլուխը պտտվում էր քաղցից, իսկ սառնը դեռ նոր էր պաղել իր չերկրորդ սովամահ յիղած յերեսալի դիակը:

* * *

Գևոն վերադարձավ գերեզմանատնից՝ բահը ձեռքին: Նա շշմածի պես էր, աշխարհը կարծես փոխվել էր. առաջ նրանց գյուղից ամիսը մի մարդ չէր մեռնում, այժմ որական տաս, տասնեհինգ դիակ էր ուղարկվում գերեզմանատուն: Կյանքը կարծես խամրում, վերջանում էր: Սակայն Գևոն հույս ուներ, վոր մոտ է փրկության ուրը և յերբ հիշում էր այդ ուրը, նրա սիրտը բոցավառվում էր, աչքերը կաթկալտում էին և լցվում զայրույթի թույնով:

Ազատության միակ հույսը Գևոյի համար զրահագնացքն էր. նա, միայն նա կարող է դուրս քշել դաժան պայմաններ կերտող մարդկանց, վորոնք կըրակ, ավեր, կոտորած, մահ ու քաղց բերին Շիրակին:

«Զրահագնացքը վերջ կդնի Շիրակի գյուղի անտանելի տառապանքներին,—մտածում եր Գեոն՝ նըստած հիվանդ յերեխայի կողքին.—նրա վրայի յերախը բաց թնդանոթների ու գնդացիւնների կրակի տարափը, հետու, հետու կքշի նրանց, վորոնք խանդարում են Շիրակի աշխատավորության խաղաղ աշխատանքը»:

Գեոն մի իղձ ուներ միայն. նա տենչում եր, վոր Զրահապատն աչնքան կրակ թափի իր միջից, վոր կարելի լինի արել ամբողջ Շիրակի ներկան, նոր կյանք ստեղծելու համար:

Գեոն դեմ չեր, վոր ինքն ես դո՛ւ գնա արդ կրակին, միայն թե զրահագնացքը մոնչա, հաղթանակի միայն թե նոր կյանքը գա:

Հենց նույն օրը Գեոն կրկին իր մոտ կանչեց ընկերներին՝ խորհուրդ անելու և պատրաստություններ տեսնելու:

Դեռ կես ժամ չեր անցել, յերբ զրսից լսվեց մի ահուելի ձայն, վոր կանչում եր Գեոյին: Այդ ձայնը բոլորին ծանոթ եր: Գեոն թողեց ընկերներին և դուրս լեկավ խրճիթից: Մառազներիստ Մաքոն եր կանչողը՝ ճերմակ ձիու վրա նստած. տեսնելով Գեոյին նա բըղավեց.

— Ի՜նչ ձագ, չե՞ս իմանում, վոր կանչում են. շուտ արի գլուգամեջ, խմբապետի մոտ՝ «կամավոր» պիտի գրվես, հերիք ե՛ վորքան տանը նստեցիր, աչժմ հարկավոր են հայրենիքի պաշտպաններ: Դե շուտ, ի՜նչ ես քարացել, առանձ ընկիր:

Գեոն վռչինչ չալատասխանեց, վայրկենապես մըտավ խրճիթը, մի յերկու խոսք քչփչաց ընկերներին,

ծոցի գրությունները հանձնեց նրանց և դուրս լեկավ
ու մառազերիստ Սաքոյի առաջն ընկած՝ գնաց գյու-
ղամեջ:

Գյուղամիջում, լեկեղեցու առաջ, քառասունի
չափ գյուղացիներ ելին հավաքված, գյուղի գրագիրն
արձանագրում եր լեկողների անուն-ազգանունը. կա-
նալք արտասվալից աչքերով լալիս ելին՝ բողոքելով
մառազերիստ Սաքոյին և նրա կողքին կանգնած սպա-
լին:

— Քաղցած, չփլաղ հար եք տանում:

— Տանը կտոր հաց չկա, ի՞նչ պետք է անեն լե-
րեխաներս:

— Ավերվի ձեր որեքը, ավերվի,—լացակումած
բացականչում ելին կտուրներից մեկի վրա հավաքված
կանայք:

Այս աղաղակները և գյուղացիության բողոքն
ամենեկին չեյին ազդում մառազերիստ Սաքոյի և տա-
նուտերի վրա: Նրանց ի՞նչ, թե ով ե քաղցած, ում
յերեխան ե մեռնում, կամ ում տունն ե ավերվում:

Զորահավաք կատարողները դեռ չեյին վերջա-
ցրիլ գործը, յերբ գյուղը մտավ մոտակա գյուղերից
հավաքված մի ուրիշ խումբ: Նրանք բոլորը ներկա-
յացան սպային և ցուցակագրվեցին: Միջանի լուռ
բողոքներ անցնելուց հետո, սպան կարդաց զորահա-
վաքի յենթարկվող բոլոր գյուղացիների ազգանուն-
ները և պատվիրեց պատրաստվել յերեկոյան քաղաք
մեկնելու:

Այդ մոմենտին հավաքված գյուղացիների միջից
առաջ յեկան լերեք լերիտասարդ և ցցվելով սպայի
ու մառազերիստ Սաքոյի առաջ, բացականչեցին.

— Մենք չենք հպատակվում ձեր զորահավաքի հրամանին, դուք կործանեցիք մեր լերկիրը, դուռները, ընտանիքը, տունն ու տեղը, դուք դիակ չինեցիք մեր ժողովրդին, իսկ մեր լերկիրը մեռելատուն, չենք գնա և վոչ մի տեղ, վորովհետև չգիտենք, թե ուր ենք գնում և ում համար ենք գնում:

— Դուք որենք չունեք, անորեններ եք, տանում եք խեղճ գյուղացիներին ձեր հիմար քմահաճույքներին զոհ դարձնում,— խոսեց լերկրորդը:

— Ձենք գնա, չենք գնա,— գոչեցին բոլորը:

Հանկարծ պսպղած Սաքոյի մառաղների փողը, իսկ տանուտերի և սպայի մարակներն սկսեցին վառել առաջ յեկած յերիտասարդների կաշին:

— Բայլ չեիկ եք, համ, բայլ չեիկ:

Բարձրացած ճիչ-աղաղակի վրա ամբողջ գյուղը հավաքվեց: Ծեծը շարունակվում էր: Յերիտասարդներն անշընչացած դեմքին եյին փովել...

Յերեկոյան դեմ մառաղերիստ Սաքոն և սպան կապել ավին հաղիվ ուշքի չեկած բողոքող յերիտասարդների ձեռները և, հավաքելով զորահավաքին լենթարկած բոլոր «կամավորներին», քչեցին Ալեքսոյ:

Գյուղը համարյա թե դատարկվեց, ամայացած, չութի մաճը բռնող մարդ չեր մնացել գյուղում: Մառաղերիստ Սաքոյի քեֆը լավ էր, նա ճանապարհին «քաջ հայդուկի» լերդն էր լերդում, յերդում էր բարձր ձայնով, հպարտ իր արածով:

Առավոտ էր:

Սովորական զարնանալին առավոտ: Արևի ծիրանեղուն ճառագայթներն ահագին խուրձիրով պատ-

ռում եյին Շիրակի դաշտի թանձր մառախուղը: Յողի կաթիլներն աղամանդի նման փալկվում եյին կանաչազարդ մարգերում: Արագածը վեր եր բարձրացրել էր գագաթներն ամպերի ողակից և համբուրում եր արևի ծիրանեգույն շողերը: Բնությունը պճնված հագարեբանդ ծաղկունքով՝ կարծես ծաղրում եր Շիրակի շինականի սիրտը, վոր պարուրված վշտի քողով՝ պատրաստ եր իր անեզր բողոքի հրդեհով վոչնչացնելու տիրող կարգերը:

Դրսում պարուն, ծաղիկներ, արև—շինականի սիրտը՝ սևամած ու մռայլ. բնությունը հաշվի չեր առնում մարդու տրամադրությունը:

Ալեքսոյի կայարանում յերկար ու ձիւ կանգնած ե «Վարդան զորավար» զրահագնացքը: Նրա լինդանութների ու զնդացիների յերախները քարացած նայում են հեռու, հեռւ, դեպի Շիրակի լայնածիր դաշտի ամիերը:

Շիրակի շինականը պուղից, լեռներից, մարդերից նայում և դեպի զրահագնացքը, նայում և ու մրտածում:

«—Ինչո՞ւ չե լռել ալդ անիրավը: Ինչո՞ւ չեն ժպտքում նրա հրետանիները մեր սրտի նման: Միթե չի կարելի խոսեցնել ալդ քննված զրահագնացքին մեր ոգտին: Անպայման, անպայման պետք և խոսեցնել նրան, նա կոգնի մեզ, նա կամրացնի՝ մեր պայքարի թիկունքը»:

Սակայն զրահագնացքը լուռ և, տառնյակ հաղարավոր մարդկանց հայացքներին նա տուտասխանում եր քար լուսթյամբ:

Լուսթյունը խանդարեց կայարանի դեպոյի շէակը:

Զրահագնացքի հրամանատար Սերգեյը վեր թը-
ռավ քնած տեղից, նայեց շուրջը, կինն ու լեռեխա-
ները քնած հյին հանդիատ: Նա շտապ հագնվեց, համ-
բուրեց քնած լեռեխաներին, դուրս լեկավ զրահապա-
տի վազմնից և քալելն ուղղեց դեպի դեպոն: Յերբ
նա ներս մտավ աշխատանքի սրահը, նոր զրահապատի
թիթեղներն արդեն կոփվում էին սալերի և մուրճերի
արանքում: Այդ ջրուտ ձևերը, վոր դարկում էին
պողպատին, դիտելին թե ինչու և ում համար և պատ-
րաստվում այդ նոր զրահապատը. նրա ամեն մի պը-
տուտակը գյութական ուժ էր հաղորդում բանվորնե-
րին:

Ենոր զրահապատը հին զրահապատի հետ կողք
կողքի՝ աղատություն են բերելու Շիրակի չարճաշ
աշխատավորությանը. հող, հաց են տալու շինակա-
նին, իրենց զրահները դեմ են անելու աշխատավո-
րության բանտարկած իրավունքների պաշտպանու-
թյան համար,—կրկնում եր բանվոր Ավոն՝ ճակատի
քրտինքը սրբելով:

Ու աշխատում, անդադար աշխատում են բան-
վորները, համադրված, վոր զրահապատը հացից ու ջը-
րից ավելի չե հարկավոր իրենց:

— Թրխի, հա թրխի, չրխի հա չրխի, — իջնում
էին ծանր մուրճերը պողպատի վրա, միացնում կը-
տորներն իրար...

Սերգեյը հանդարտ ու վճռական ձայնով ուղղում
էր վարպետ ընկերների նախագիծը, գովաբանում,
ժպիտներով քաջալերում:

Մալխի սկիզբը մոտ էր, իսկ յերկրորդ զրահա-
գնացքի ավարտման համար դեռ աշխատանք էր պա-

հանջվում: Յեւ Սերգեյը փոփսում եր բանվորների ու վարպետների ականջին:

— Այս ամենը շատ գեղեցիկ է, բայց նոր զրահագնացքը մեղ ավելի շուտ է հարկավոր, քան մեր նշանակած ժամանակը:

— Շճւտ, ինչպէս թե շուտ...

— Այո, շուտ, ավելի շուտ, քան մենք կարծում էինք, ավելի շուտ...

Ու այս խոսքերի վրա կապույտ բաճկոնավորներն ավելի հիւն արագացնում մուրճի հարվածները, ավելի թեթեւացնում քուրաններն ու շնչում մեկը մյուսի ականջին:

— Վարպետն ասում է, թե նոր զրահագնացքը մեղ ավելի շուտ է հարկավոր, քան նշանակված ժամանակամիջոցը:

— Վարպետը ճիշտ է ասում:

— Վարպետը չի սխալվում:

— Զարկ, զարկ, մեկի փոխարեն յերկուսը, յերեքը զարկ, շուտ է հարկավոր մեզ, շուտ:

Շատ գլուղացիներ հիւն գալիս Սերգեյի մոտ՝ դեպոն, զրահագնացքը: Շիրակի բոլոր գլուղերից գալիս ու գնում էին:

Գլուղացիներն ուղում էին, վոր զրահագնացքը շուտ խոսի, ուղում էին, վոր զրահագնացքն իրենց սրտում կուտակված մաղձը թափի մեղավորի գլխին:

* * *

Մի գիշեր, յերբ զրահագնացքում հավաքվել էին դեպոյի բանվորները՝ Շիրակի գլուղացիների և զինվորների հետ սովորական հերթական աշխատանքի մասին խոսելու՝ պատահեց մի անակնկալ դեպք:

ժողովին ներկայացավ բաարակ Գևորգ, վորին ն. վաշտն իբր թն գործով ուղարկել էր Ալեքսանդր Սակաչն իրոք Գևորգին ուղարկել էր ն. վաշտի հեղափոխական բայշնիկուն կազմակերպությունը՝ մասնակցելու Զրահագնացքում տեղի ունեցող խորհրդակցությանը։ Գևորգ լսելով ապստամբության կազմակերպման շուրջը տեղի ունեցող խոսակցությունները՝ խոսք առավ։

— Յեա լիազորված եմ ն. վաշտի և Ալեքսանդրի գլխավորական մասերի կողմից հալտարարելու ձեզ, վոր նրանք վճռական կերպով պահանջում են պարզել ապստամբության գրոշը վաղը յերեկոյան։ Գլուղացիության գծողության և բողոքի խնհրորդ ալիքն արդեն բարձրացել և և կարող և իջնել առանց կազմակերպության գիտության ու ղեկավարության։ Վորպեսդի ալդ տեղի չունենա, վորպեսդի կազմակերպված ձևով դուրս քշենք մեր գլուղերից իշխանության ներկայացուցիչներին, կուսակցությունը պետք և վորոշի և ղեկավարի։ Առաջին խոսքն, ի հարկե, պատկանում և զրահագնացքին, նրա վորոշումը վճռական և լինելու մեղ համար։

Բոլորի կրծքերն ապատ ու խոր շունչ առան. Գևորգ խոսքերն հասկանալի ելին բոլորին։ Նրանք ցանկանում էին վողջունել Գևորգին և միմյանց, բայց նրանց հալացքները հանդիպեցին սեղանի ծայրին նստած զրահագնացքի հրամանատար Սերգեյի դեմքին։

Ղեկավարը վեր կացավ տեղից և ասաց վճռական շեշտով։

— Զրահագնացքն իր ամբողջ կազմով պատրաստ

ե պարզել ապստամբութեան դրոշը և իր զրահներով պաշտպանել հեղափոխական շարժումը: Բատրակ Գիվոյի տռաջարկը միանգամայն ժամանակին ե և ընդունելի: Հետաձգելն այլևս հանցանք ե. մեզնից պահանջվում ե կռվել, ուրեմն պետք ե կռվենք և տապալենք հակահեղափոխական իշխանությունը...

Ուրախությունից բոլորի մարմինը փառքաղվեց: Յեռում ելին մտքերը զրահազնացքի մեջ, ցնծում ու թնդում հլին սրտերը, վողջունում ժպիտներով միմյանց: Հավաքուլթը յերկար ժամանակ քննում եր ապստամբութեան հարցը:

Ժողովը վորոշեց հետևյալ որը պարզել ապստամբութեան դրոշը. բոլորն ստացան իրենց անելիքների ծրագիրը և դուրս յեկան զրահազնացքից:

Դուրսը խաղաղ եր, լուռ: Զրահազնացքը փայլում եր լուսնի արծաթաշող լույսի տակ: Հսկում ելին միմիայն զրահազնացքի պահակի համր ու համաչափ քայլերը կայարանի ավազների վրա:

Մյուս որը նորակազմ ռազմահեղափոխական կոմիտեյի հանձնարարութեամբ բատրակ Գիոն վերադարձավ կրկին Ն. վաշտը՝ Յերևան, ապստամբութեան հետ կապված կարևոր հանձնարարություններով:

Ոգտվելով հանգամանքից՝ Սերգեյն իր կնոջը՝ Մարիամին ու յերեխաներին Գևոյի հետ ուղարկեց Յերևան:

— Գնա՛ք բարով, վաղն արդեն այստեղ ամեն ինչ փոխված կլինի,—ասաց Սերգեյը և զրկեց յերեխաներին... Մարիամ, մերոնց կասես, վոր կարձակենք մեր վերջին գնդակը, կթափենք մեր արյան վերջին կաթիլը:

Գնացքը սլանում եր... Մարիամն անդուսպ արտասվում եր... յերեխաներն ապշած հարցնում ելին.

— Մայրիկ, ինչո՞ւ յես լալիս:

— Մայրիկ, հայրիկն ինչո՞ւ ասաց սիտի թափենք արյան վերջին կաթիլը:

~ ~ ~

Ութն ընկալ. դեպոյի բանվորներէ մի խումբ մտալ զբահադնացք, ուր տնդալին աշխատանք եր տեղի ունենում: Սերդեկն աջ ու ձախ կարգադրություններ եր անում.

— Պահեստի բոլոր վազոնները լցրեք ռումբերի և գնդակների արկղներով, վորքան տեղ կա՝ մինչև առատաաղբ: Ապահովեք շոգեմեքենան նավթով և մագլթով:

Ռումբերի և գնդակների պահանջվող պաշարը տեղափոխվեց զբահադնացք: Զինվորները կարգի ելին բերում և յուզում թնդանութների և գնդացիւրների փակադակներն ու դսպանակները:

Զբահադնացքի վազոններից մեկում բանվորների ուղղութեամբ լերկաթյա յերկար ձողի վրա ամրացնում ելին փալլուն կարմիր քաթանը:

Դա վաղվա դրոշն եր, ապստամբութեան, հեղափոխութեան, աշխատանքի ազատազրութեան ալ դրոշը:

— Սիրտս շատ արագ և դարկում, Ավո, չգիտեմ ինչու...

— Ուրախութունից ե, ուրախությունից. սլ, յես այժմ մի անսովոր յեռանդ եմ ստացել, այս կարմիր քաթանն աղդել և ինձ վրա, ուղղում եմ, վոր շու-

տով ճարճատեն գնդացիւրները, ուզում եմ, վոր միանգամից հրդեհենք ամբողջ աշխարհը:

Սերգեյը ներս մտավ զրահագնացք. նա լսեց վերջին խոսքերը. ձեռքը դրեց Ավուրի ուսին.

— Դու ցանկանում ես հրդեհել չարիքը. լավ ձգտումներ ունես, Ավուր, պետք է հրդեհենք ամբողջ աշխարհը: Այնքան հրձիգ ընկերներ ունենք... շատ, շատ...

— Հը՛, ի՞նչ կհրամայես, ընկ. Սերգեյ, ծածանեմք դրողը, կարմրեմք.

— Ծածանեցրեք... կարմրացրեք...

Մթության մեջ զրահագնացքի աշտարակի գըլխին պարզվեց աշխատանքի դրոշակը:

Գիշերվա ժամը չերեքն էր, չերբ քաղաքի կենտրոնում հավաքված բանվորների և ղինվորական մասերի միջանի գումարտակներ բանվոր Ս-ի առաջնորդութամբ շարժվեցին դեպի կայարան: Փողոցներում և հիմնարկներում պահակներ նշանակվեցին: Ամեն ընկեր գիտեր իր անելիք, ամեն մի մարդ իր տեղումն էր:

Խուժը հասավ կայարան և հավաքվեց զրահագնացքի առաջ: Սերգեյն իջավ զրահագնացքից և մոտեցավ խմբին: Մի քանի բոպեյից հետո խուժը գըրավեց կայարանը, նշանակեց պահակներ և հեռագրով հայտնեց Ղարաքիլիսա ու Յերեան, թե Ալեքսովն ալլևս գնացքներ չի ընդունում:

Ալագյազի դագաթը նոր էր շառագունել, չերբ զրահագնացքի թնդանոթներն ու գնդացիւրները սկըսեցին պտտվել, շոգեմեքենան մռնչաց, սուլից, առաջ սուլեց դեպուրի շտակը: Զրահագնացքի ամենամեծ թըն-

դանոթներէից մէկն ահարկու դղրդյունով վորոտաց ապըստամբութեան ազդանշանը:

Շիրակի դաշտն ուրախությամբ արձագանքեց ալդ վորոտին, վորից հետո թնդացին տասնյակ հազարավոր մարդկանց սրտեր, ժպտացին հազարավոր արցունքից չորացած աչքեր, դյուղերը վորտքի կանդնեցին:

— Ափս, ափս, վնւ կաց, վնւ կաց, քաղաքի կողմերում թոփ տրաքեց:

— Աղն, աղն, թոփի ձէն լեկավ:

Կուլակ Համոն սկսեց հարայ տալ:

— Հմլ-հարմ, հեյ-հմյ, հարայ, թուրքը դալիս է, թուրքը:

Շիրակի դյուղերն իրար անցան: Գաղթականներն սկսեցին հավաքել իրենց իրեղենները...

Սակայն ամեն տեղ, ամեն շրջանում լավ գիտեցին, թե ինչ թոփ է տրաքում, ով է տրաքացնում և ում համար է տրաքում:

Թնդանովի ձայնի վրա քաղաքում հրացանածը-դություններ տեղի ունեցան: Տների պատուհանների վարագույրների տակից մերթ ընդ մերթ փողոց ելին նալում բաղձաթիվ աչքեր, սակայն պահակների յերեւոյուն պէս թաղնվում ելին և սպասում լույսի բաց-վելուն:

Մշուշի մէջ զրահագնացքի ամենաբարձր աշտարակի վրա ծփում էր ալ դրոշը: Զրահագնացքը փրնչալով մի քանի անգամ օնհանդիստ սուլոցներ արձակեց, բաժանվեց չերկու մասի, մի մասը սլացավ դեպի Զաջու, իսկ մյուսը՝ դեպի Աղին:

Ալեքսովի կայարանը գտտարկվեց:



Հուլիսը բացվեց:

Ալեքսանդրի միջանի հիմնարկների գլխին ծածանվում ելին կարմիր դրոշներ: Ամբոխը լցրել էր փողոցները, վիճում ելին, հրհրում, վազում ելին: Բոլոր խանութները փակ ելին, բայց խանութպանները կանգնած խանութների առաջ՝ աչքի տակով դիտում ելին հեղկոմի մարդկանց, զինվորների և բանվորների անցն ու դարձը և խոսում:

— Ղարսեն խաբար չեկավ, ե:

— Ղարս կըսես, վոչ Յերևանեն, վոչ ալ Թիֆլիզեն պովեզդ չկա:

— Չե, բանը պրծած ե. Ժողովուրդն հոռնց կողմն ե, կորանք, քեռի Սիմոն, կորանք. տխ... Ղմխ:

— Հուլիսդ մի կորցնի, ինչքան ջարդվել ենք, ելի ենքան լճարդիկնք, հսոնց չենք թողնի, վոր մեր գլխու տերը դառնան:

— Հըբը ոռսը, Կրասնի Արմին կթողի, վոր դու հսոնց մազին դիպչիս:

— Սպասե հլա, Անգլին ու Ֆրանցուզ սրանց կրասնի նշանց կառտան:

Այս խոսքերը կարեցին Ջաջուռի կողմից լեկող գնացքի՝ սուլոցները: Ահագին թվով յերեխաներ ու յերիտասարդներ գոռալով սկսեցին վազել դեպի կայարան:

— Պովեզդ, Թիֆլիզեն պովեզդ:

Ամբոխը խոնված վազում էր դեպի կայարան — կանայք, յերեխաներ, ծերեր՝ ով կարող էր:

Ջաջուռի կողմից փնչալով, կարմիր դրոշներով և կանաչ շյուղերով զարդարված զբահագնացքը մտավ

կայարանն։ Նրա թնդանոթային աշտարակի գագաթին ծածանվում էր կարմիր դրոշը։ Շուտով լավեց նաև գրահաղնացքի մլուս մասի շոգեշարժի շշակի ձայնն Այդին կայարանի կողմից։ Նույնանման կանաչ-կարմիրով պննված՝ նա ևս մտավ կայարան և միացավ կանոնած գրահաղատին։ Կայարանում զանվող զորքերը, բանվորները, գյուղացիները և ամբոխը հուզված ու զդարցված թնդուններով գոռում էին։

— Կեցցե՛հե՛հ։

— Կեցցե՛ խորհրդային Հայաստանը։

Առաջին անգամ Շիրակի գյուղացին իր ճնշված կրծքի տակից բացահանչեց «Խորհրդային Հայաստան»։ Նա համարձակ էր այժմ, աղաւտ-համարձակ, վերովհետև նրա առաջ կանգնած էլին ծով գլուխներ, հազարավոր սվիններ և հալարտ գրահաղատը։

— Ա՛յս է ահա, այս կարմիր դրոշը, խորհրդային կարմիր դրոշն և մեր փրկութլունը։

— Ճիշտ է, Վարոս ջան, ճիշտ է։ Յեթև ալդ կարմիր դրոշն ավելի վաղ տարզվեր, եսքան զաղթա-կանութլուն, եսքան կոտորածներ չէր լինի։

Հանկարծ ամբոխը լռեց, Սերգեյն արդեն կանոնած էր գրահաղատի աշտարակի գլխին։

— Ասիդ է, մոյ, ասիդ Հեղհումի նախագահը։

Կրակոտ ու վոզևորված էր խոսում Սերգեյը Խորհրդային Հայաստանի մասին։ Զրահաղնացքը շրջապատած աշխատավորութլունը կլանում էր ազահորեն նրա խոսքերը, թափանցում նրանց լեմաստի խորքը և ցնծութլան ու հիացմունքի բացահանչութլուններով ամեն մի նախադասութլունից հետո կրկնում։

— Թող կորչեն յեղբայրության աղղամիջյան կը-

ռիֆները, կեցցե՛ն խորհրդային Շիրակը, կեցցե՛ն Խորհրդային Հայաստանը:

Հավաքված մասսան թնդում եր, հեծելագնդի գինվորները ծածկում ելին նրա թնդունն ուռաներով: Սերգեյից հետո խոսեցին Ավետիքը, Արտաշեսը, Պետրոսը և մի շարք բանվորներ ու գյուղացիներ:

Շիրակի դաշտերը ժպտացին. մայիսյան արևի դուրեկան ճառագայթների տակ հրճվում եր հավաքված աշխատավորութունը. զրահապատի փեղկերն ու զրահները, կարմիր ժապավենների մեջ, հանդեսին ավելի տոնական բնույթ ելին տալիս. գյուղացիք ուղտըտվում ելին զրահապատի շուրջը, հրճվանքով դիտում նրա զրահները, փայփայում, գուրգուրում: Նըրանց համար հիմա զրահապատի ամեն մի չնչին մասնիկը թանգ եր, անգնահատելի:

Զրահապատն այդտեղ յերկար կանգ չեր կարող առնել, նա բաժանվեց և կրկին հեռացավ լերկու ուղղությամբ:

Հավաքված բաղմությունը սկսեց ցրվել դեպի քաղաք:

— Ոհո, Սեթ աղբար, դու ել ես վաղգալ յեկե, հաբա դու ասում եյիր, թե մեր լերկիրը բալլեհիկ չի գած,— խոսում եր մի գաղթական յերիտասարդ դաշնակ Սեթի հետ:

— Տեսա՞ր ինչ լեղավ, բալլեհիկ, են ել ի՞նչ բալլեհիկ, քաջ բալլեհիկ, չիտաի պրորի բալլեհիկ, մեռնեմ յես եզոնց ծրագրին, լավ ծրագիր ունեն մարդիկ, լավ:

— Այ՛, գաղթական Կարապետ լանի մի որում վո՞նց իմացար, թե ի՞նչ մարդիկ են դրանք և ի՞նչ ծրագիր ունեն:

— Եւ, քիչ բան տեսն, ինչ իմ մորից ինչ վոր լեւել եմ, եղպես բան չեմ տեսել. մի կազմակերպութիւն, վոր իր ծրագրի վրա եղբան հավատ ունենա, անպատահաւ կհաղթի, եղ հավատն ամենամեծ հաղթանակն է: Մի տեսնելիք, թե դեպոյի բանվորը կամ գյուղացին վճնց ա խոսում դրանց մասին. չե, լավ ա, լավ, բայլչեիկն աշխատավոր գյուղացու-բանվորի հոգին ա, բայլչեիկն լեկովի չի, ինչպես դու ելիր ասում. բայլչեիկը մեր մեջն է, մենք ենք, մենք: Լսեցիր ինչ խոսքեր ասեց Սերգեյը. վոսկէ տառերով պիտի գրեն նրա խոսքերը, վոսկէ...

Սեթը լռեց, բայց վաչ են լռելուն, վոր լռեց:

Նա կանգ առավ, վոր ընկերները հասնեն իր լեռերից: Յերբ բոլորը հավաքվեցին, Սեթը մի բան փրստաց նրանց տկանջին, ապա խոսելով, բոլորը մտան քաղաքի մութ փողոցներից մեկում զտնվող մի տուն:

Մթության մեջ նշմարվում էր, վոր այդ խմբի լեռերից դնում էր մի ստվեր: Գողթական վարպետ կարոն էր, վոր դադարագողի հետեւում էր կասկածելի տղ խմբին և ներս մտավ նույն բակի դռնից:

* *

Ջրահալաւոր սուլոցով սլանում էր Շիրակի դաշտերում՝ մերթ դեպի Ալեքսան, մերթ դեպի նրա հակառակ կողմերը: Շիրակի գյուղացիութիւնը մեծ բազմութեամբ հավաքվում էր նրա շուրջը, դարգարում նրան կանաչ ճուղերով ու ծաղիկներով, աշխատավորութեան հաղթանակի ու փառքի ցնծութեան յերգեր հյուսում նրա շուրջը: Ալազանի լանջերից հովիտները ցած ելին իջնում դեպի դաշտ՝ կարմիր դրահալաւոր

տիսնեիլու, մալիսյան ծաղիկներ եյին բերում նվեր:
Հովիթները մարգերում յերգ հյին հյուսել զբահագնաց-
քի համար

Ջրահագնացքը վորոտաց,
Բյուրավոր սրտեր թնդաց,
Առե ջան, առե,
Մեր յերկիրն ազատ ե:

Ապստամբութեան վեցերորդ որն է: Ջրահապա-
տը կանգնած է Ադին և Անի կայարանների մեջտեղը:
Սերգեյը գրտսենյակում նստած՝ աշխատում էր. դեռ
Յերևանից վոչ մի լուր, վոչ մի տեղեկութուն չկար

Սերգեյը յերկար-յերկար նայում էր իր առաջ
փռած քարտեզին: Ծեզը բացվելուն մոտ էր, լերը նա
բարձրացավ զբահագնացի աշտարակը պահակներին
ստուգելու: Ամենքն իրենց տեղումն էյին, ամեն բան
կարգի էր ու պատրաստ: Լուսաբացի աղոտ լույսի
տակ աշտարակի գլխին պարզված գրոշն ավելի խոր-
հրդավոր ու հաղթական էր թվում նրան: Նա նայեց
դրոշի տակի պողպատե թիթեղին ու ընկավ մտքի
ծովի մեջ. — «Յերևանը կարճադանքի, թե չէ. Յերևանը
ողնութեան կլամ, թե չէ...»:

Յերկաթե տոկունութուն ունեւ նա. լոթ գիշեր
չէր քնել և հոգնած ու շման սկսեց ննջել:

Ալապյաղի փեշերը քերով արևի ճառագայթների
ջերմութունն արթնացրեց նրան: Նա վեր կացավ
տեղից ու հեռագիտակով սկսեց դիտել իր շուրջը.
ամեն ինչ հանգիստ էր ու խաղաղ: Արդ բոլորին Սեր-
գեյին մոտեցավ Արտաշեսը և, մատն ուղղելով զեպի
մոտակա բլուրներից մեկը, ասաց.

— Տես, այն ժայռի տակից մեկը մոտենում է մեզ:

— Այո, նա դեպի մեզ է գալիս, բայց պետք է զգուշ լինել. մեզ կարող են ուրիշ կողմերից ել մոտենալ:

Բոլորը բարձրացան իրենց տեղերը: Զրտահոսացքի թնդանոթները և գնդացիներն սկսեցին պտտվել: Դնացքը հանդարտ սկսեց շարժվել անձանոթ մարդու ուղղութիւնով: Յերբ բաժականին մոտեցել էին միմյանց, անձանոթը սկսեց նշաններ անել սպիտակ թաշկինակով: Դնացքը կանգ առավ. ղինվորներից մեկն իջավ և մոտեցավ անձանոթին, վեր մի գլուղացի լեր: Մի քանի րոպե անց. ղինվորն ու անձանոթը զրահահոսացք մտան: Գլուղացին քրտինքի մեջ կորել էր. նա առանձին բաժականութեամբ ծոցից հանեց մի մեծ ձրար և ավելց Սերգեյին: Սերգեյը արագութեամբ բաց արեց ձրարը, վորի մեջ բաժականին թղթեր ու նամակներ կալին, և համշտակութեամբ սկսեց կարգալայդ բոլորին կցված առաջին նամակը, վորի մեջ գրութեմ էր.

«Թանգադին Սերգեյ.

Կատարեցի քո տված բոլոր հանձնարարութեանները: Այս նամակը և սրա հետ կցված բոլոր գրութեանները ուղարկում եմ՝ Յերեանի վարդապետ համաձայն՝ քեզ իրազեկ դարձնելու նպատակով: Ինչպես գիտես, ապստամբել և և՛ Դիլիջանը: Ապստամբութեան լուրն առնելուն պես՝ Յերեանում ձերբակալեցին բոլոր ընկերներին. անասելի հալածանքներ են սկսվել ընկերների և նրանց ընտանիքների դեմ, բանտարկված են նաեւ կինը ու յերեւաներդ: Այս պատճառով Ալեքսանդրի ապստամբութեանը յերեւ Յերեանը չի կարող արձագանքել: Յերեան հասնելուցս մի քա-

նի որ հետո, Դաշնակցությունն սկսեց պատրաստվել: Սեպուհը հավաքեց իր մաուզերիստներին և Ն. գունդը, փորի մեջ եմ և յես: Այժմ գալիս ենք ձեզ վրա: Կանգնած ենք ձեզանից 30—40 վերստ հեռավորության վրա: Առաջին հարմար դեպքում յես իմ ընկերներին հետ կանցնենք ձեր կողմը: Սեպուհի հավասը դեպի մեր գունդը չափազանց թույլ է: Ձեզ վրա առաջինը հարձակվելու լին հայդուկները: Վաղը հարձակումն է:

Կեցցե՛ք Խորհրդային Հայաստանը:

Համբուրում եմ ձեր պարզած դրոշը և բոլորիդ: Մանրամասնությունները նախիր քարտեզում և ուղարկված գրություններում:

Քո Գևորգ

Սերգեյի ճակատը ծածկվեց քրտինքով: Նրա գլխաց նստած գլուղացին հանգիստ կերպով նայում էր իր շուրջը զրահազնացքին և պատուհաններին: Սերգեյը կարգաց և՛ մյուս գրությունները, ապա սկսեց հարցաքննել գլուղացուն:

— Նրանց գնդացիները ոռոտակմն են:

— Ռուսական էլ կան, անգլիական էլ:

— Իսկ թնդանոթները:

— Յոթ հատ են և ոռոտական:

— Լնվ է գինված դորքը:

— Ձենքը հեշ, համա ուտելիքն ու խմելիքը բոլ է, ել գեղորայքում հալ ու հարաքլաթ չթողին, ել հաց, մսացու ու արաղ չթողին, լափում են անվերջ, լափում, խեղդեցին մեղ, սպանեցին: Ամեն ժամ, ամեն րոպե սպասում ենք զրահազնացքին, աչքներս ջուր դառավ, չեկաք ու չեկաք:

— Իսկ դուք թնչ եք անում, թնչ եք մտածում:

— Մենք թնչ կարող ենք անել, մեր մեջքը զրահագնացքն է, վոր դա, ամեն ինչ կանենք:

Սերգեյը ջղաձղորեն վեր կացավ տեղից և սկսեց հուզված քայլել զրահագնացքի միջանցքում:

Կես ժամից հետո գլուղացին վերադարձավ իր լիկած ճանապարհով, իսկ Սերգեյը հեռախոսով հայտնեց արդ տեղեկությունները Ալեքսոյ:

* * *

Մյուս օրը, լերբ լուսը բացվեց, զրահագնացքը կանգնած էր Կ. գլուղի մոտ հանգստացող Սեպուհի խմբի դեմ առ դեմ: Նրա աշտարակի գլխին փողփողում էր կարմիր դրոշը, իսկ ճակատին, կարմիր կտավի վրա, փայլում էր «Կեցցե Խորհրդալին Հայաստանը» մակագիրը:

Ջրահագնացքը լուռ էր ու քաղաքած: Սեպուհի ղինվորներն արթնանալով, գլուխները կորցրած, այս ու այն կողմն էլին ընկնում, գոռում-գոչում, հայհոյում, թաղնվում քարերի տակ:

— Այս վորտեղից և թնչպես է յեկել ու սեպի նման ցցվել:

— Նաչեցեք, նաչեցեք, ալլես նրա մեջ կենդանություն չկա, մարդ չկա, նույնիսկ շոգեմեքենան չի գործում:

— Անկասկած թողել, փախել են:

Խմբապետը դղակը թեքեց, լեռ գցեց կողքի մառուիքը, մի քանի սպաների հետ բարձրացավ մի քարի գլուխ և հեռադիտակով սկսեց դիտել... Հեռադիտակի տակից նշմարվում էր, թե թնչպես ծռվում

եյին խմբապետի դիմագծերը. նա անասելի անախոր-
ժությամբ կարդաց զրահագնացքի վրա մակագրված
եկեցցե նորհրդալին Հայաստանը՝ բառերը և կատա-
ղած պոռնիկի նման թքեց գետնին.

— Ավագակներ... Լակոտներ...

Խմբապետը և հրամանատարներն ապշել էին.
ներանք, ճիշտ է, իրենց արշավանքների ժամանակ հա-
ճախ ապուշ էյին յեղել, սակայն այժմյան ապշութունը
սահմանից անց էր: Նրանք զրահագնացքը դատարկ
համարելով՝ վորոշեցին մոտենալ, գնդացիության կրակ
բանալով զրահագնացքի վրա:

Զրահագնացքը դարձյալ լուռ ու քարացած՝ կանգ-
նած էր իր տեղում:

Սեպուհ «գորավարը» քսշվեց մի տպահով տեղ,
իսկ իր «քաջարի» տղերանցը առաջ ուղարկեց: Տղեր-
քը մոտենում, հա մոտենում էին: Գնդացիները
ներանց յետևից զրահագնացքի վրա առատ արճիճ
էին թափում, բայց գնացքը քարացած կանգնած էր
իր տեղում: Հիսուն քայլի վրա էյին տղերքը զրա-
հագնացքից, յերբ վերջինս փոնչաց, ահադին դղր-
դյուն հանեց, թնդանոթներն ու գնդացիներն ուղղվե-
ցին Սեպուհի գորախմբի կողմը: Մոտեցողները քա-
րացած պառկեցին տեղերում, վերջացած համարելով
իրենց գործը: Սակայն զրահագնացքը վոշ թե արճիճ,
ալլ սպիտակ թերթիկների ահադին կուլտեր թափեց
և հեռացավ դեպի վեր:

Նրա հեռանալուց հետո Սեպուհի գործն սկսեց
շարժվել. գործի յետեվից շարժվում էր մի ուրիշ
գնացք:

Կանգ առնելով Ադին կայարանում, զրահագնաց-

քը տենդորեն պատրաստութիւններ եր տեսնում ճակատամարտի համար:

Ձրահագնացքի ներսը խմբված ղինվորները մտախոհ և լիտանդուն աշխատում էին ու սպասում դեկավարի հրամանին: Ինդացիւրների ժապավեններն արդեն անց եր կացրած Մակսիմի բերանը, ռումբերը դրված էին հրանոթների մէջ: Ձինվորները աշխատում էին և խոսում բարձրաձայն:

— Կռվում ենք, ելի:

— Բա թնչ ելիր գիտում, հանմք ենք անում:

— Ձե, լեա կարծում էյի՝ առանց կռվի ամեն ինչ կղղվի:

— Վճնց չե, առանց կռվի կարմիր զրոշակ ծածոնել, իմացել ես եղպիսի բան, ճվ քեզ կթողնի: Հլա մի տես, քանի տարի լե Ռուսաստանը կարմիր դրոշակի համար կռվում և Դենիկինի, Կոլչակի, Յյուզենիչի դեմ:

— Հիմի ես ել մեր քաղաքացիական կռիվն ա, ելի:

— Հա, բա...

— Սեպուհն ել Դենիկինն ա...

— Իհարկե, Սեպուհը Դենիկինն ա, Դենիկինն ել Սեպուհն ա. մերոնք ենաեղ Դենիկինին են ջարդում, մենք ել Սեպուհին պիտի ջարդենք:

Հը'... հո չե՞ս վախենում սպանվելուց, մեռնելուց, շան տղա, թե վախենում ես, զրահագնացքից դեն կզցեմ քեզ:

— Ե', լերեխի հէտ ես խոսում, ուրիշի համար հո չեմ կռվում, ինձ համար եմ կռվում:

Ներս մտաղ Սերգեյը:

— Իմացե՛ք, ընկերներ, վոր ճակատամարտին լուրաքանչլուր բոպեն մեզ համար թանգ է լինելու: Կարող է կողքներին ընկնել ձեր ընկերը, ղեկավարը, արյունը կլճանա, կլերդանա... Թող արյունը ձեզ չվախեցնի. առանց արյան վոչ մի հաղթանակ չի կարող լինիլ, առանց մահվան նոր կյանք չի ստեղծվի:

Սերգեյի խոսքերը կտրեց թնդանոթի մի ահարկու հռնդյուն... զրահագնացքից վոչ հեռու ուռմբը փոքեց գետինը և պայթեց. փողին ծածկեց զընացքը:

— Բոլորն իրենց տեղերը... դանդաղ... հա... — ամջ... — գոչում եր Սերգեյը:

Բոլորն իրենց տեղերումն եյին:

Գնացքը հանդարտ շարժվեց...

Նրա հրանոթները սկսեցին գործել. ճակատամարտն սկսվեց: Ժխորի մեջ մերթ ընդ մերթ աշտարակի վրաից լսվում էին Սերգեյի հանդարտ, խըրոխտ հրամանները, վորից հետո ալեկոծվում եր մթնոլորտը. ուռմբերի պայթույթը և գնդացիների ճարճատյուները ահանջ եյին խլացնում: Զրահագնացքի ըմբոստ համազարկերի տակ ընկնում եյին Սեպուհի հերոսները, փախչում, գնացքը հետապնդում եր նրանց... և հենց են ե, պետք է անցներ նրանց թիկունքը, ողակի մեջ առներ բոլորին, հանկարծ կանգ առավ և, չնայած ղեկավարի հրամանին, ալլևս չեր շարժվում...

Ճանապարհը գիտող գինվորը հեռախոսով ղեկավարին հայտնեց, վոր ուղին քանդված է և վի՛ն փորված:

— Հաբեթ, բավոր քեզ ասի, թե Սեպուհը Դենիկին է, տեսմը, Դենիկինն ել եղպիսի բաներ անում:

Հենց այդ միջոցին սկսեցին ուժեղանալ յերկաթ-
գծի հյուսիսային կողմը՝ ուղին փչացնելու և զրահա-
դնացքը գերի վերցնելու նպատակով: Զրահադնացքը
փորձեց լիտ շարժվել, սակայն թնդանոթային կրակը
խանդարում էր, իսկ թշնամին արդեն բռնել էր դնաց-
քի լիտ գնալու ուղին — յերկաթագիծը:

Զրահադնացքը մնացել էր յերկու պատնեշի մեջ:
Հանկարծ լավեց շշակի ուժեղ սուլոց, ապա առատ ար-
ճիճ տեղաց, յերկաթգիծը բռնած խմբի թիկունքի
կողմից լավեց մի քանիսի աղիտղորմ ճիչեր, մի քանի
մարդ ընկան, մուսնները փախուստի դիմեցին. զրա-
հադնացքի մյուս կեսն էր, վոր մաքրեց ուղին և մո-
տեցավ իր ընկերոջը:

Գերակշռող ույժերով հարձակվող թշնամին վեր-
ջին փորձն արեց ողակել զրահադնացքը. հռնդյուն-
ները կրկին թնդացրին ողը, զրահադնացքները դղըր-
դում եյին, մոնչում, սուլում .. Վառողի և արյու-
նի հոտը ապականել էր մթնոլորտը:

Տղերքը արկղերով ոււմբերը չեյին կարողանում
հասցնել աշտարակը, հրանոթները այնքան ելին տա-
քացել, վոր վառում եյին մոտեցողի ձեռներն ու դեմ-
քը: Սերգեյը հրանոթից ինքն էր արձակում դեպի
ողակի ալն մասը, վորը փորձ էր անում մոտենալ
յերկաթգծին: Սակայն ապառաժների ու ժայռերի
հետեւը քարշ գալով սողեսող, իրենց թնթանոթի կը-
րակի տակ ապահովված թշնամու ողակը մոտենում
էր: Զրահադնացքը կրկին պատռեց ողակը, խուճա-
պի լենթարկելով թշնամուն, ապա անիվի հանդարտ
պառուլաներով հեռացավ Ալին կալարանից դեպի
Ալեքսյով:

Նրա աշտարակին պարզած կարմիր դրոշը գըն-
դակներին տարափից քրքրվել, ծվհն-ծվհն եր լեղել:



Զրահագնացքը զլխապսուլտ արագությամբ սլա-
նում եր դեպի Սլեքպու:

Սերգեյի կրծքի տակ հրդեհ եր վառվում. նրա
ուղեղն զբաղված եր մի մտքով՝ «ինչ՞ա վոչ մի կող-
մից ընկերներն ոգնության չեկան... մի՞թե պետք է
վիժի ապստամբությունը: Նրա առաջ պատկերանում
եր Շիրակի ցավատանջ գյուղացին, վորը վաղը-մյուս
որը պետք է յենթարկվեր վայրագ գազանների ծեծին
ու հալածանքին, վաղը կրկին պետք է լավելին կարի-
քի, արցունքի ձայները:

Զինվորները զրահների յետևը նստած՝ զրուցում
են, փափսում...

— Սերգեյը տխրել է:

— Մենակ Սերգեյը չի տխրել. նրա հետ տխրել
ե և՛ ամբողջ Շիրակը:

— Շատ, շատ են սիրում Սերգեյին Շիրակի
գյուղացիները:

— Նա ել նրանց է սիրում, է,—ասում եր Ար-
տաշեսը,—տեսեք, թե ինչե՞ր արեց. խիզախ ու հա-
մարձակ՝ նա հոկտեմբերյան հրդեհի կայծերով վառեց
մեր յերկիրը, ուր դարերի ընթացքում խորը վիշտ,
լալկանություն ու վորքություն եր թագավորում, ու
ժողովուրդը կորցրել եր ինքնուրույն մտածելու և
գործելու ընդունակությունը և միշտ ձեռքը մեկնած
մուրացկանի նման՝ նայում է ուրիշի դեմքին, ուրիշի
չուրթերին:

— Նոր մարդ ե Սերգեյը, կրակ ե տեղնուտեղը, ասում ե՝ պետք ե այրենք, քարուքանդ անենք, մոխիր դարձնենք դարերի վշտի տակ հեծող ալս յերկիրը: պետք ե մի նոր ուրախ, պայծառ, կարմիր հալրենիք ստեղծենք:

— Մեծ մարդ ե. ասում են՝ Լենինն ե ուղարկել զրան Բազվից, ինչ զրան սիրում եմ: Ձեզանից ամեն մեկը, ասում ե նա, Լենինն ե, ձեզանից ամեն մեկի մեջ Լենինն կա:

Զրահադնացքը սլանում ե. պողպատյա զրահների գդրդյունը խլացնում ե գնացքում զրուցող գլուղացի զինվորների խոսակցութլունը:

Խալարի մեջ գնացքը կանգ առավ Ալեքսով կայարանում, զրահադնացքը մտան կայարանում սպասող Հեղկոմի բոլոր անդամները: Հեղկոմի հերթական նիստը բացվեց: Սերգեյը լերկար ժամանակ խոսում եր ապստամբութլան ընթացքի մասին:

Վերջում նա հալանեց, թե կենտրոնից ե ալլ կողմերից սպասվող ոգնութլունը չստանալու պատճառով, ժամանակավորապես պետք ե դադարեցնել ապստամբութլունը:

— Այս ապստամբութլունը այն նշանակութլունն ունեցավ, վոր քընածներն արթնացան, թմրածներն առույգացան, թույլերն արիացան: Մեր պարտութլունը հաղթանակ ե, բոլոր մեր պարտութլունները հաղթանակներ են:

Մթութլյան մեջ տնքոցով ու փնչոցով զրահադնացքը հեռացավ Ալեքսովից ե կանգ առավ Շիրակի քրտնաթոր դաշտի մեջ: Նրա հրեաանիների ե գնդացիների պետքական մասերը հանեցին ու վռչչացրին:

Ջրահագնացքի մեջ գտնվող բոլոր ընկերները, բաժանվելով խմբերի, հեռացան դեպի լեռների լանջերը, մինչի ապստամբութեան լերկրորդ ազդանշանը:

Ծանր, ծանր, արճճից ել ծանր մի բան ճնշում էր բոլորի սիրտը՝ զրահագնացքից բաժանվելու բուպեյին: Ջերմ, չերջանկավետ մի հուլս կապում էր նրանց զրահագնացքի սառը պողպատների հետ, և նրանք չիյին ուզում բաժանվել նրանցից:

Ի՞նչպես թողնել, վորքան հուլսեր ու հուլդեր, վորքան հավատ նոր կյանք ստեղծելու, վորքան կրակ կտր նրա մեջ՝ հրդեհելու և ավրելու հինը՝ վորքան արճիճ կար՝ գորշագուլն կյանքը վերափոխելու. համար:



Յերկար քայլելուց հետո, Սերգեյն ու Մելքոնը հասան Ջ. գլուղը և դիմեցին իրենց ծանոթ գլուղացիներից մեկի խճիթը:

Քնաթաթախ գլուղացի Համոն ապշած էր մնացել, տեսնելով Սերգեյին: Խճիթ հրավիրելով նրանց, նա շշտակի հարցրեց.

— Ջրահապատն ինչո՞ւ յի՞ք թողել, ի՞նչ և պատահել ձեզ:

— Թողինք, վորովհետև հարկավոր էր թողնել:

Այս խոսքերը լսելով, Համոն քիչ էր մնում ուշաթափվի. նա արդեն իրենց գլուղում հեղկում էր կազմել և գլուղը խորհրդային հայտարարել, իսկ վաղը, վաղն արդեն ամեն ինչ կրկին պիտի փոխվի. զրահապատն ավելա չի սլանա Շիրակի ազատ դաշտերով՝ կարմիր լողունգներով և դրոշներով զարդարված:

Համոյի յերևակայութիան մեջ գրահապատն ալլես չկար: Նա չքացել էր. նա այժմ Համոյի համար մի կոտորված տաշտակի արժեք տնգամ չունեւր. մինչդեռ ալսոր առավոտ նա հսկա յեր իր և իր ընկեր գլուղացիների համար, մի հսկա, վոր փրկութիւն, լուս, հաց, խաղաղութիւն եր բերում բոլոր գլուղերին:

Սերգեյը նկատեց, վոր Համոն հոգեկան ծանր վիճակի մեջ է:

— Մեր գաղարը, Համո, ժամանակավոր է, մենք նորից ենք սկսելու պայքարը ավելի մեծ թափով. միզ համար կասկած չկա, վոր հաղթանակը մերն է. հարկավոր է միայն Շիրակի ամբողջ աշխատավորութիւնն արթնացնել, ընդունակ դարձնել նրան լսելու պայքարի և դրահապատի ձայնը, վոգեւորել այնպես ինչպես դու չես վոգեւորված, և այն ժամանակ հաղթանակը կատարւալ կլինի:

— Վոչինչ, դա դժուար բան չէ, — պատասխանեց Համոն:

Այդ գիշեր Մելքոնը գաղթական Ալոյի հետ նամակ ուղարկեց Ալեքսով. բազմաթիւ խմբեր կազմվեցին և ուղարկվեցին շրջաններն ու ավանները՝ վորսալու ապստամբ գլուղացիներին: Ավաններում ու հանգերում էլ չքավոր գլուղացի չմնաց՝ ծեծվեցին: Բալլշէիկ վորսալու հետ միասին, նրանք հարս ու աղջիկներ հյին բռնաբարում, ողի և վոչխար թալանում: Գլուղերում ձերբակալվեցին հեղկոմներն ու ապստամբութիւն մասնակցող գլուղացիները. ծեծ, աղաղակ, լաց, կոծ, սպանութիւն, արյուն, ավերածութիւն... Սերգեյին, Ավետիքին, Մելքոնին, Արտաշէսին փրկուում հյին ամեն ավանում:

-- Տվեք մեզ ապստամբներին, չեք տա, կաշիներդ կմաշկենք, ծեծում եյին, անխնա ծեծում խեղճ ու կրակ գյուղացիությանը: Մտրակի տակ նվացող գյուղացուն առաջարկում ելին.

— Հարս ունե՞ս, ռախի ունե՞ս, սո՛ւր, չեմ ծեծի:

— Բրոնպովեզդի կամանդիրին տվեք, դենք տա-նող-բերողներին տվեք, ռեկոմենդիրին տվեք, յա թե չե՛ ել հարս ու աղջիկ չենք թողնի:

Կես որ եր արդեն, յերբ լերկաթգծի վրա պահակ նշանակված Սեպուհի հալոսկներից մի քանիսն իրենց մատուցերների փողերը դեմ արին Ձ... գյուղից դեպի Ալեքսոլ գնացող գաղթական Ավոյի գանգին:

— Ի՛նչ ունե՞ս-չունե՞ս՝ տուր:

Շվարած գաղթական Ավոն բացականչեց.

-- Հե՛չ բան չունեմ, արևս վկա:

— Խոսելն ավելորդ է, կսենք հանե՛, հանե՛. գիտես, վոր մարդու գլուխը հիմա 3 կոպեկանոց գուլլա չարժե, չե՞ս վախենում:

— Վոչինչ չունեմ, սիրելիներ, թե չեք հավատա, եկեք տեսեք:

«Հերոսները» մոտեցան գաղթական Ավոյին և սկսեցին քրքրել նրա գրպանները: Փող չկար. ուտելու բան եր չկար: Ծոցում գտան Մեղքոնի իր կնոջը գրած նամակը, վոր Ավոն տանում եր Ալեքսոլ: Հայդուկներից մեկը բարձրաձայն կարդաց նամակը.

«Սիրելի Կ...

Ջրահապատը թողնելուց հետո, յես և Սերգեյը թաքնված ենք Ձ. գյուղում: Ոհան ապոր մոտ. վողջ ենք և առողջ. բարենեւր և համբույրներ:

Քո Մ.ձ:

— Ես ի՞նչ նամակ ե, իշու ձագ,— գոչեց ահռելի ձայնով Կորյունը:

— Սա... սա... Մ.— Ավոն կսկծաց, չկարողացավ վռչինչ ասել. հանկարծ գլխին իջավ մառուղների փողի մի բուխ հարված, աչքերն ու ականջները ծածկվեցին տաք արյունով, արևը մթնեց նրա աչքերին, և նա տարածվեց գետին: Առաջին հարվածին հետևեցին տասնյակ այլ հարվածներ. նրա գանգը խախալի նման ծակծկվել էր, իսկ մարմինը կապտել անդլիական կողիկների մեխերի զարկերից: Մրմնջում էր Ավոն, մըրմըռում էր նրա մարմինը, սակայն աչքից անջատ չուներ, վոր գոռար կամ լաց լինելը, ձայն չեր կարողանում հանել, միայն տնքում էր.

— Վա՛յ... վա՛յ...

— Յես քեզ բալլշեիկ ցուլց կտամ, ազգի դավաճան,— գոռում էր հայդուկը և շարունակում հարվածել:

Հայդուկներից յերկուսն արդեն հեռացել էին դեպի քաղաք՝ լուրը դորավարին հասցնելու, իսկ մեկը մնացել էր դադթական Ավոյի մոտ:

Մի քանի ժամից հետո, Ավոն սթափվեց, արյունակալու նստեց իր տեղում և ջուր խնդրեց. նրա կողքին նստած պահապան հայդուկը սկսեց հայհոյել նրան և, ջրի փոխարեն՝ վզակոթին տալով, ճանապարհ ընկավ դեպի Ալեքսոլ:

Մի քանի ժամից հետո Ձ... գյուղը լցվեց Սեպուհի հրոսակներով: Յերգընկայից մինչև Յերեսան արշավող «քաջարի» զինվորները մարակի տակ առան հեղկոմ Ռհանին: Ամբողջ գյուղը վոտքի յեր կանգնել: Շուտով ներկայացան Սերգեյն ու Մելքոնը: Սեպուհի

«հերոսները» նրանց առան ողակի մեջ և Ոհանի հետ տարան դեպի Ալեքսոլ:

*
* *

Հունիսյան գիշերներից մեկն էր: Ալեքսոլը նիրհում եր խավարի մեջ. փողոցներում համարյա վոչ վոք չկար: Ալեքսոլի բանտի զրասենյակում ինչ-վոր իրարանցում տեղի ունեւր. ճրագի առաջ ստվերներն արագ-արագ շարժվում ելին, մտնում զրասենյակ, դուրս գալիս:

Ասհանգիստ ելին նաև բանտարկված ապստամբները: Բանտի պատուհանի յերկաթյա վանդակից նրանք նայում ելին մթուժյան մեջ բակում տեղի ունեցող իրարանցմանը: Բանտարկյալները բնագդաբար զգում ելին, վոր այդ ստվերների աշխույժ շարժումները գիշերային խավարում, այդ ժամին, լավ նշան չեր: Սիրգելը խորասուզված մտքերի մեջ՝ նըստած եր կամերայի անկյունում: Նա հիշում եր Շիրակի դաշտերի մեջ սլացող կարմիր զրահապատը, մեկը մյուսի յետևից նրա մտքի մեջ վերակենդանանում ելին ապստամբության և հաղթանակի կենդանի պատկերները... Բայց չկա զրահապատը, չկան հրանոթները...

Հանկարծ հարևան կամերայի դուռն աղվուկով բացվեց և շրխկաց... Գիշերսլին խաղաղութունը վըրդովվեց, կամերայում լույսի շողք յերևաց. լավեց բանտապետի խրոխտ ձայնը

— Պատրաստվեք, գնում եք:

— Ո՛ւր ենք գնում, Ռւր... Ռւր...

Ձայները արձագանքեցին խավարի մեջ... և նո-

բից լսութունն արեց. կամերայից վոչ վոք դուրս
չեկաւ:

Սերգէյը մոտեցաւ պատին, ականջը հպեց նրան
և շնչառությունը կարած լսում էր:

— Ձենք դուրս պա,— գոչում էյին կամերայում
լեղած ընկերները: Այդ խոսքերից հետո Սերգէյը լսեց
ծեծի ու հարվածների վալբադ ձայներ: Ճիշ, աղմուկ
հայհոյանք, տնքոց... Ապա դուռը նորից փակվեց.
ձերբակալվածներից լերեքին տարան...

Քառորդ ժամ չանցած, բացվեց նաև Սերգէյի
կամերայի դուռը. նրան ևս տարան:

Բանտապետը հանձնելով Սերգէյին մաուզերիստ
Սաքոյին և Ն. գնդի զինվորներից մեկին, հրամայեց
տանել նրան Յերեւանի բանտը: Ն. գնդի զինվորը
բատրակ Գեոն էր: Գնդի կուսակցական կոմիտեն
իմանալով, վոր Սերգէյին զնդակահարելու լին ճանա-
պարհին, հերոսական միջոցներ ձեռք առաւ՝ մաուզե-
րիստ Սաքոյի հետ պահակ նշանակել տալ բատրակ
Գեոյին, վորին հարձնարարվեց Սերգէյին կենդանի
Յերեւան հասցնել:

Նախորոք բանտապետը պատվիրեց մաուզերիստ
Սաքոյին, վոր Սերգէյին Յերեւանի կալարանից բանտ
տանելիս՝ ճանապարհին զնդակահարեն, պատճառա-
բանելով, թե ձերբակալածը փորձել էր փախուստի
դիմել: Այդ մասին Սաքոն ճանապարհին պետք է
հայտնեւ զինվորին:

— Վորոշում ե, կհասկանաս Սաքո, վորոշում,—
փափսում էր բանտապետը Սաքոյի ականջին, ցույց
ստալով Սեպուհի դրությունը մի թղթի կտորի վրա.
«Յեթե այս վորոշումը չկատարես, իմացիր, քեզ ել
այն աշխարհը կուղարկեն»:

— Հասկացա, պարոն բանտապետ, հասկացա, անհոգ լեղիր, առանց վորոշման անգամ այդպիսի բաներ շատ ենք արել, բա ել ինչի՞ հայդուկն ենք, վոր մի մարդ ել չկարողանա՞նք ռադ անել:

Կես ժամ չանցած, մառուգերիստ Սաքոն և զինվորը Սերգեյին տանում եյին Ալեքսանդրի կայարանը: Մուկն ավելի խռացել և թանձրացել եր: Դեռ նրանք չեյին հեռացել բանտից, յերբ մթուժյան մեջ նրանց ականջին հասավ մի զիւ ձայն.

— Պատ...բաստ... կրակ...

Հսկեց հրացանսիրի համազարկ... յերեքին դընդակահարեցին: Սերգեյը կանգ առավ, խոր հառաչեց: Նրա կողքից քալող բաւրակ Գևոն ջղաձգորեն մի շարժում կատարեց և զայրույթով ինչ-վոր բան մըրթմըրթաց:

Հետեյալ որը, գնացքը Յերևան հասնելուց հետո, յերբ մուկն ընկել եր, մառուգերիստ Սաքոն մի քանի ոյումկա արադ կոնծելուց հետո, կարգադրեց դուրս բերել Սերգեյին կալանատեղից և զինվորի հետ, քաղաք տանող ճանապարհը թողած, մի այլ անյերթեւեւ ճանապարհով տանում եյին Սերգեյին Յերևանի բանտը:

Հասնելով քաղաքի և կայարանի միջև գտնվող խուլ, հեռաձայն վայրերից մեկը, մառուգերիստ Սաքոն մոտեցավ իրեն հետ քալող զինվորին և ականջին շնշաց:

— Հրամանը պետք է իրագործել, հայրենիքի պաշտպանութիւնն այդքալահանջում, սրանից հարմար տեղ չկա. դե պատրաստվիր, զարկենք:

Զինվորը չզարմացավ հալուկի այս հալաւարա-

բութլան վրա. նա մի քանի քալ յետ յտակեց և հրացանի փողը մեկնելով Սաքոյի կրծքին՝ պռաց.

— Ուղեղդ կցրեմ... կցրեմ, ասում եմ, յեթե համարձակվես ձեռք տալ կալանավորին: Անցիր առաջ դեպի բանտ: Սրան կենդանի կտանենք և կհանձնենք Յերեւանի բանտում սպասող իր ընկերներին:

Հալդուկը աղշած նալում եր զինվորին հրացանի փողին և կալանավորի ժպտացող աչքերին. նա ուզեց մի բան ասել, բայց լեզուն վրա չեկավ. կմկմաց և առաջ անցավ: Յերբ նրանք Յերեւանի բանտը մտան ու ներկայացան բանտապետին, զինվորը մեկ ակնթարթում անհետացավ բանտից: Մառազնիւստ Սաքոյի և Յերեւանի հետախույզների ձեռք առած բոլոր միջոցներն ապարդիւնն անցան: Զինվորը՝ բատրակ Գեոն անհետ չքայել եր:



Յերեւանի բանտի ներսը սարսափելի մութ եր և խոնավ. մահվան հոտ եր փչում նրանից: Ամեն որ պատգարակների վրա նրա մութ խցերից սովամահ տիֆահար և զնդակահար ղիտկներ ելին դուրս բերում ու տանում թաղելու: Սալլակը, վոր կրում եր դիակները, սարսափելի ճոճում եր, նրա սաճակը մաշվել եր շատ աշխատելուց: Սալլապան Տիգրանը դիակ եր կրում բանտից և հիվանդանոցից: Այդ տարի բանտից և հիվանդանոցից նա ալնքան դիակ եր կրել, վոր նրա համար դա սովորական բան եր դարձել: Սակայն նա զայրաւնում եր, լերբ դիակները չափազանց շատ ելին լինում, ու մըթմըթում իր մտքում.

— Ե՛հ, սրանք ել դատարկ մարդիկ են. լերկիր

ելին ուզում ազատել, հայկական հարց էլին վճռում, գոռում ելին «ծովից ծով Հայաստան», սակայն Վանից մինչև Յերևան փախան, դիակներով ծածկեցին ամենուրեք, հիմա ել բալլեիկ են կոտորում... բալլեիկը թնչ մեղք ունի:

Իսկ բանտում լսվում եր «Խնտերնացիոնալը»-ի հուժկու ձայնը.

«Ելիր՝ ում կյանքը անիծել ե...

.

Դրսում գնդակահարված, ծեծից կապտած, տիֆահար դիակներ, ներսում՝ անվախ պայքարի յերգ, վոր լի յեր հաղթանակի հզոր թափով, վառ հույսերով ու նոր կյանքի հրապուրով:

«Խնտերնացիոնալ»-ը լսելիս՝ Տիգրանը գլուխը յետ եր թեքում դեպի բանտ և աչքերը թարթելով, լսում եր հափշտակութամբ, շնչառությունը պահելով: Տիգրանը գիտեր, վոր «Խնտերնացիոնալ»-ը բալլեիկի յերգն է, նա հասկանում եր նաև նրա բովանդակությունը. նա ասում եր ինքն իրեն. «Լավ մարդիկ են բալլեիկները, հավատ ունեն դեպի իրենց դործը՝ համարձակ են, նրանք կողնեն ինձ, յես կարող եմ ինձանից խլված հողը հետ ստանալ, նոր տուն կառուցել, նոր կյանք ստեղծել, խաղաղ հանգիստ ապրել»:

Դրա համար եր Տիգրանը սիրում բալլեիկի յերգը՝ «Խնտերնացիոնալը». սակայն ճշնչացող սայլը դիակներով խանգարում եր նրան այդ յերգը լավ լսել: Տիգրանը յերբեմն կանգնեցնում եր սայլակը՝ լավ լսելու համար և ինքն ել սիրում եր ձայնակցել. բանտապետը զայրանում եր նրա վրա.

— Ուշանում ես, անպետք, ուշանում ես, իսկ դիակները հոտում են:

Թանտարկյալները չափազանց թշվառ և տանկա-
նելի դրութիւն մեջ էին: Քաղցը և հիվանդութիւն-
ները տասնյակներով վռնչացնում էին մարդկանց:
Յեւ թիպետ նրանց վրտ նշանակված էին կրկնակի
սկիչ պահակներ, սակայն նրանք կտրողանում էին
դրսի ընկերների հետ կապ պահպանել:

Մանր և ճնշող տրամադրութիւն էր տիրում
գիշերը, վոշիլը քրքրում էր նրանց մարմինը և զըր-
կում նրանց հանգստից ու քնից: Քաղաքի գիշերային
աղմուկը բոլորին թվում էր ռաարոտիւ: Յերբեմն գի-
շերները հանկարծ բաղխում էին բանտի դուռը, ան-
համարձակ են բաղխոցները, բալց բաղխում են:

— Ի՞նչ եք ցանկանում, — գոռում են բանտի
ներսից:

— Հրաման ե, բացեք, — պատասխանում էին:

— Առավոտը լեկեք, կբանանք, — պատասխանում
էին բանտարկյալները:

Գալիս էին մարդիկ դուրս տանելու, վռնչաց-
նելու նպատակով, սակայն լիտ էին գնում. իսկ լերը
բացվում էր լույսը, լերը արեւը ծագում էր, գիշերով
յեկող մարդիկ չէին լերեում. նրանք վախենում էին
լուսից, իրարից, ամենից, ամեն բանից վախենում
էին: Նրանք միշտ վախկոտ են լեզել և թագցրել ի-
րենց կեղտոտ արարքները գիշերվա մթութիւն մեջ:

*
* *

Ռուբեն փաշայի առանձնասենյակի դռները փակ
էին, քարաուղարը վոչ վոքի չէր ընդունում: Նրա
մոտ նստած էին բոլոր ֆրոնտներից փախուստ տված
«բաշարի» դորավար Սեպուհը և «քաղաքագետ» Զի-

լինգարյանը: Լուր եր ստացվել, թե Զանգեբասարում ապստամբ դուռնացիությունը, բալլեիկների առաջնորդութիւամբ, մի քանի դաշնակներ ե վոչնչացրել: Հավաքված լիւրակը վրեժի պատրաստություն եր տեսնում:

— Վրեժ, վրեժ, — գոչում եր Սեպուհը, — տաճկի դաբաւոր վրեժը բոլլեիկից պիտի հանել:

— Իսկ վրեժ լուծել ձեռք ու վտարելը կապված թշնամուց՝ հայդուկների միակ ռազմական քաջութիւնն եր: Յերկար խոսակցությունից հետո Ռուբեն փաշան, բարձրացնելով իր վարտիքը, աչքերը ճշգճաւացնելով և խոժոռելով դեմքը, հանեց գաղտնի խորհրդակցության լեզրակացութիւն:

— Այսպես ուրեմն, այս գիշեր, յերբ քաղաքի փողոցները կդատարկվեն մարդկանցից, բանտից դուրս կբերեն լերեքին՝ Մուսայելլանին, Ղարիբջանյանին և Ալլահվերդյանին, վորոնք քաղաքից հեռու կվոչնչացվեն ըստ մեր վորոշման: Վոչ մի մարդ չպետք ե տեսնի և իմանա, թե ինչպես են սրախողխող անում այդ սրիկաներին, վոչ մի մարդ... «Ծովից ծով Հայաստան»-ի քաղաքագետները վախենում ելին «դավաճան» թշնամիներին վոչնչացնել որը ցերեկով, ափաշկարա:

*
*
*

Ոգոստոսի շոգ ու տոթակեղ գիշերներէց մեկն եր: Բանտի պատուհանների տակ լսվում եր Տիգրանի սայլակի ճռնչոցը: Բանտարկյալներն արդեն լուր ելին ստացել դրսից, վոր այս գիշեր գնդակահարելու լեն լերեքին, ուստի վոչ վոք չեր քնում: Բոլորը մտածում ելին մի կերպ խանգարել լերեք ընկերների ավազակային սպանությունը:

Բոլորի սրտերումն էլ բողոքի փոթորկահույզ կրակն եր վառվում: Բանտի խցերում, կամարների տակ, աղմկում էյին բանտարկյալները, բռունցքները սղծած և խեղդված ձայնով փսփսում, խոսում:

— Այս գիշեր պիտի թափեն լերեքի կարմիր արյունը, ասում են՝ ծածուկ են տանելու նրանց:

— Առանց դատի և դատավճռի, ավաղակալին մութ, ստոր և զաղտնի կերպով պետք և խլին մեր շարքերից մեր ամենասիրելի ընկերներին:

— Միթե բավական չէյին նենգամիտ ու զաղտնի սպանությունները. արյունով վողոդեցին մեր լեկիրը. չե՛, բավական և, չենք թողնի...

— Արյուն, դեռ շատ արյուն և հարկավոր, մինչև վոր դա հատուցման ժամը: Իսկ լերք նա դա, յերբ պոսթկա վրեժի ցասումը, մենք մեկ մարտիկի փոխարեն կջնջենք տասնյակներ, հարյուրներ:

Գիշերվա ժամը տասնյերկուսը զարկեց: Փողոցում, բանտի պատի տակ կուչ լեկած կինը ցնցվեց: Մարիամն եր. նա լսել եր, վոր այս գիշեր Սերգեյին իր ընկերների հետ տանելու յեն անվերադարձ ճանապարհով, յեկել եր իր զավակների հետ վերջին հրաժեշտի խոսքն ասելու, դեթ հեռվից տեսնելու ամուսնուն: Արցունքը խեղդում եր նրա կոկորդը, նրա արյունակալած աչքերը փալում էյին մթության մեջ, սակայն նա չեր լալիս, արիաքար տանում եր իր ծանր վիճակը և ուղասում:

Շուրջը այնքան լուռ եր, այնքան խաղաղ, վոր յերբեք չեր կարելի չիրակայել, թե սպանություն պիտի կատարվի. լուսթլան մեջ միայն լքավում եր Զանդու գետի վշշոցը:

— Մայրիկ, լճրբ կտեսնենք հալրիկին,—հարցնում ե փոքրիկն իր մորը:

— Չգիտեմ, զավակս, չգիտեմ:

Գիշերվա ժամը մեկը զարկեց... Սակայն յերեքին դեռ դուրս չեյին բերում. յերեխաներն արդեն ննջում ելին բանտի առաջ, փողոցի մայթերի վրա, իսկ Մարիամը անվերջ տրորում եր ձեռները:

Մթութլան մեջ Մարիամին մոտեցավ մի ստվեր: Բատրակ Գևոն եր. ամբողջովին կերպարանափոխվել եր. կուսակցական կոմիտեն հանձնարարել եր նրան՝ Մարիամին ու յերեխաներին մի կերպ տուն վերադարձնել:

— Վե՛ր կաղ, գնանք, Մարիամ, գնանք, հավատացնում եմ՝ այս գիշեր չեն տանելու, այս բոպելիս լուր ստացանք, վոր այսօր չեն տանելու, գնանք, մեղք են յերեխաները:

Բատրակ Գևոն տարավ յերեխաներին. կես ժամից հետո նա կրկին վերադարձավ նույն փողոցը և թագնվեց բանտի դռների մոտ գտնվող պատի տակ: Ժամը յերեքը զարկեց:

Բանտի ներսում, կիսախավար կամերայի մեջ, կանթիղի լույսի տակ, Սերգեյը հրաժեշտի նամակ եր գրում իր ընկերներին: Նրա դեմքն ավելի յեր հերոսացել, աչքերը փայլում ելին կատաղութունից: Գլը տինքով պատած ճակատն ու դեմքը մարդկային առապանքի դրոշմ եյին կրում, առաքալանքի, վոր համակված եր աշխատավորության ցավով, գաղափարի պալքարի խաղթանակի տենչով: Եյանքը նրա համար ախճան արժեք ուներ, վորքան հարկավոր եր աղ նրան՝ նոր կյանքը բերելու համար: Հտնկարծ նրա

դուխը պտտովեց, նա կարծես սլանում էր հաղթական
զրահադնացքի վրա, նրան ղեմավորում էին հազար-
ավոր գյուղացիներ, նա լսում էր ջերմ վողջուհի
խոսքեր, կարմիր հաղթանակի ցնծութիւն լերդեր:
Տասնյակ տարիներ արլուն տեսած արշալույսը բոցա-
վառվել էր, լերկրի դաշտերը Արարատից մինչև Արա-
ղած՝ ժպտում էին... Սիրտը թնդաց, նրա բոցավառ-
վող աչքերի մեջ լերեաց քուրախութիւն արցունքը:

Նա աչքերը հռոնց կանթիղին և նրա առկալծող
լուսի մեջ կարծես մի բան էր փնտրում. հասկացավ,
վոր լերեակալությունը պատրանքների յետևից և
ընկել Առաջը ցցվեց ներկայի արլունոտ իրականու-
թյունը:

Հիշեց զավակներին, սիրտը մորմոքվեց, ալիկոծ-
վեց ամբողջ հոսթյունը: Լավ և, շատ լավ, վոր նա
զավակներ ունի, թող նրանք իմանան, թե զաղափա-
րի և աշխատավոր ժողովրդի լավագույն ձգտումների
համար ի՛նչպես են մեռել իրենց հալրերը... Դեռ հաղ-
թանակը ելի շատ դռներ պիտի տանի, և թող նրանք
մեղնից զոհվել սովորեն...

Հանկարծ դռները ահարկու թափով բաղխեցին:
Բոլորը վեր թռան տեղից:

— Բացե՛ք, շուտ բացեք, — դռում էին զրսից:

Ամեն ինչ հասկանալի չէր, լիկել էին լերեքին
առնելու:

— Չե՛նք բացի, հեռացե՛ք դռներից, լիկեք, յերբ
լույսը բացվի, — գոչեցին մի քանի ձայներ ներսից:

— Բացե՛ք, տսում ենք:

Ամբողջ բանտը վտառի կանգնեց, մասսան ալիկոծ-
վեց, սկսվեց իրարանցում, բողոք, աղաղակ, սուլոց:

Բանտը դարերի ընթացքում, իր դոյության սկզբի որերից, այդպիսի ակեկոծում չեր տեսել։ Մարդկային դանդաժը ահարկու դայրույթով ու վոռնոցով մռնչում եր ակեկոծ ծովի նման և զարկում դռներին ու պատուհաններին։

Դռները չետեից ևս փակ եյին ու յերբեք չեյին բացվի. այդ գիտեյին չեկողները։

Լսվեցին կացիւնների հարվածների ձայներ. իրենց բանտը կացիւնների հարվածներով եյին բացում։ Դռները փշրտվեցին և տապալվեցին, ներս խուժեցին մի խումբ «անվհիւներ» ֆիդայիներ՝ վտաքից մինչև գլուխ զինված, փայլուն սուսերներով և դաժան ու մոլեգին թափով սկսեցին հարվածել մոտ յեկողներին։ Արջուհնը ցնցուկեց հատակը։

— Տվե՛ք յերեքին...

— Դահիճներ։

-- Ավազակներ։

— Գողեր։

Յեւ բանտարկված մասսան, դայրույթի կրակը սրտում, վրեժից ատամները կրճաացնելով, թափվեց դեպի դռները, սակայն մերկացրած սուսերները և մաուզերների փողերը կասեցրին նրա շարժումը։ Մասսան զսպեց իրեն, յերեք ընկերներն առաջ յեկան Սերգեյը յերեսը դարձրեց դեպի բանտարկչաւ ընկերները և բացականչեց.

-- Ընկերներ, մենք վոչ թե խոսել, այլ թքել անդամ չենք ուզում այս ավազակների վրա։ Մենք զնում ենք. մեզ վերադարձ չկա, դա մեզ և մեր մեծ դործի համար նշանակություն չունի. ամենեին չընկճվիք. մեր արջուհնը թող ավելի ուժեղացնի ձեր պաշ-

քարի թափը: Տարիների ընթացքում մեր գաղափարի հաղթանակի գործը մեր արյունով և յեղեկ ներկված, բայց դրանից չեն սարսափել վնչ մեր ուսուցիչները, վնչ մենք և վնչ ել կատարածի հաջորդ սերունդը: Վաղը, մյուս որը հաղթանակը մերն և. մեր աչքերը խամբած կլինեն, մենք չենք տեսնի կարմիր արշալույսը, սակայն գիտենք, վոր նա դալիս և և յեթե նրա գալը պահանջի կրկին և կրկին զոհեր, զիմավորեցեք մահին ժպտողիմ և համարձակ քայլերով: Այսպիս միշտ պատրաստ, պաշտպանեցեք միմյանց, պաշտպանեցեք ձեր մաքուր ուղին, գաղափարը, ձեր կարմիր հաղթական դրոշը: Մնաք բարով:

Յերեքը դուրս չեկան բանալից:

Նրանց տարան մութ ու անհալտ ճանապարհներով, առանց շշուկի, գրեթե զոդալով:

* * *

Մութն այնքան թանձր էր, վոր տաս քայլի վրա վոչինչ չեր նշմարվում: Յերեքին տանում ելին դեպի Յերեանի հյուսիսային կողմը: Քաղաքի ծայրում, բանտում լավում էր «Լեռներնացիոնալի» ձայնը:

Խուճրն առաջ էր շարժվում, ստիպելով ձերբակալվածներին քայլերն արագացնել: Խճրի յետևից ծալաված քայլում էր բառրակ Գեոն: Յերե քաղաքից բավականին հեռացան, հասան այգիների մյուս կողմը, կանգ առան նշանակված տեղը:

Նրանց հետևող բառրակ Գեոն ևս կանգ առավ: «Հեռոսները» կրակ վառեցին, ապա նրանցից մի քանիսը մոտեցան չերեքին և բահերը դցելով նրանց առաջ դոշեցին:

— Փորեցեք ձեր գերեզմանները:

Յերեքը լուռ կանգնած, արհամարական հայացքով միայն պատասխատեցին դահիճներին:

«Հերոսների» ձեռք առած միջոցները՝ ստիպել լերեքին փորել իրենց գերեզմանները՝ ապարդյուն անցան: Նրանք իրենք փորձեցին: Փորելը բավականին ժամանակ տևեց, վորովհետև տեղը քարքարոտ էր, գերեզմանից դուրս չեկած և շրջակայքում հավաքված քարերից ահագին կույտ կազմեցին:

Յերք գերեզմանը պատրաստ էր, նրանք հանեցին իրենց հետ բերած լերկար պարանը և մոտեցան լերեքին՝ կապելու նրանց ձեռքերը:

— Մի՛ կապեք,— գոչեց Ղարիբջանյանը,— մենք չենք փախչում, գնդակահարեցեք առանց կապկպելու:

— Մենք ձեզ չենք գնդակահարում,— պատասխատեց «հերոսներից» ավագը:

— Հապա ի՞նչ եք անում:

— Հրաման ե չգնդակահարել:

— Վորպեսզի վոչ վոք չիմանա, հմ:

— Յերևի, չգիտեմ...

Յերեքին կապեցին, կապկպեցին, այնքան քչկրտեցին պարանով, վոր նրանք մսի գնդի մի կույտ դարձան, ապա բոլոր քսան և հինգ հոգին զինվեցին քարերով և սկսեցին քարկոծել լերեքի մարմինը: Քարերի հարվածներից լերեքի գանգերը ջախջախվեցին. ուղեղի մոխրագույն մասսան կարմիր արյան հետ ջրվել էր նրանց պատռոտոված հագուստի վրա: Նրանք վաղուց ջախջախվել, անշնչացել էին, սակայն «հերոսները» դեռ հարվածում էին, մինչև դիակները ծածկվեցին քարերի կույտով:

Հայկական հարցը վճռվեց...

Այնուհետև «հերոսները» քարակուլաթի տակից բահերով հանեցին արլունաշաղախ դիակները, գցեցին փոսի մեջ, ապա նրանց վրա թափեցին իրենց հետ բերած նավթը և վառեցին:

Գիակները ճենճերացին, կուչ լեկան և սևացան:

Նրանցից մոչ հեռու, բաթուակ Գևոն գետնի վրա տարածված յեղունդներով փորում էր հողը, կրճատացնում ատամները և խելագարի նման բռնեցքները սեղմած՝ կայծեր եր արձակում աչքերից:

«Հերոսները» մոխիրը խառնեցին հողի հետ, ցաք ու ցրիվ արին արլունոտված քարերը և հողը մոխրի հետ թաղեցին ու հեռացան դեպի քաղաք:

Արևելքը շառագունեկ էր. լույսն արդեն բացվում էր:

* *

Ամիսներն անցան: Զրահագնացքը լերկրորդ անգամ վիթխարի մի գրոհ տվեց: Աստեղաղարդ մի դիշեր վարչապետը և իր իշխանությունը անվերադարձ կերպով տապալվեցին ու փախան:

Ո՛ւ Բ՛ւ... ծղրտում էր զրահագնացքը և սլանում դեպի Յերեան: Բոլորը վազում էին դեպի լերկաթադիծը՝ զիմափորելու նրան, վորի հետևից կապած փալտն ապակիներով վազոնի մեջ էր նոր իշխանությունը: Զրահագնացքի զնդացիներն ու հրանոթները չէին գործում. նրանց փոխարեն չբխկչխկում էր զրամեքենան, վոր հաղթանակի մոզջույնի հեռագրեր ու կարգադրություններ էր տպում: Ճակատներին վարդապույն տսաղեր կրող զինվորները բարձրանում էին


հեռագրասլուկների վրա, նոր լարեր եյին անց կաց-
նում, կառուցում եյին քանդած ճանապարհները, կա-
մուրջները, տները...

Որեր անցան. յերկու ավտո, զարդարված կանաչ
ճյուղերով և կարմիր ժապավեններով, սլանում եյին
դեպի Յերևանի հյուսիսային կողմը: Նրանցից առա-
ջինի մեջ նստած եյին հեղկոմի անդամները, իսկ յեր-
կրորդի մեջ՝ կոմյերիտականներ:

Ավտոները կանգ առան քաղաքից վոչ հեռու մի
քարակույտի մոտ: Բոլորն իջան և ուղղեցին իրենց
քայլերը դեպի աջ: Նրանց առաջնորդում եր ռազմա-
հեղափոխական կոմիտեյի անդամ բատրակ Գևորգ:

— Ահա, այս ժայռի տակ եյի պառկած և դի-
տում եյի այն սոսկալի մահապատիժը, վոր գաղտագո-
ղի կերպով կատարեցին «հերոսները» իրենց տիրա-
պետութւան վերջին որերին. ահա աստեղ քարկոծե-
ցին, այրեցին ու թաղեցին նրանց:

Խուժը բատրակ Գևորգի առաջնորդութւամբ ար-
դեն կանգնած եր յերեքի գերեզմանի կողքին, վորը
թաղված եր կարմիր դրոշների մեջ: Կոմյերիտական-
ները փորում եյին գերեզմանը...



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0040851

ԳԻՆԸ 30 ԿՈՊ. ՄԱՍ. (4 ժամ)

I
5161



Վ. ԱՏՐՅԱՆ

БРОНЕПОЕЗД

Госиздат ССР Армении
Эривань—1930